891.5
३-52

891.5
Z-52

26 JUN 2006
19 NOV 2010

«ԱԼԻՔ»-Ի ՄԱՏԵՆԱՇԱՐ № 16—17.

ՆՄՈՒՇՆԵՐ ՓԱՐՍ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ա. ՀԱՏՈՐ

Մ. Մ. ՀԻՔԱՔԻ

ՀԱՅԵԼԻ

Համառօտ տեսութ. եւ թարգմ.

Ե. ԷԼՄԱՐ

ԹԵՀՐԱՆ
Տպարան „Մոդերն"
1939

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՌ-ԱՄՍ СССР
Ա. Մ. Ա. Մ.
ՍՈՍԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2032-22

Մ. Մ. ՀԻՋԱԶԻ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՖԱՐՍ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Նորութիւն չի լինի եթէ ասենք, որ ֆարսերէն հարուստ գրականութիւնը մեծ մասամբ ամփոփուած է բանաստեղծական երկերի մէջ։ Կրօնական զգացմունքներն ու աստուածային ներշնչումները, փիլիսոփայական մտքերն ու պատմական դրուագները, ինչպէս և վիպական կերտումներն ու կեանքի այլ ապրումները արտայայտուած են, ընդհանրապէս, չափածոյ ձևով։

Երաժշտականութիւնն ու ներդաշնակութիւնը, կշռոյթն ու յանգը ֆարսերէն գրականութեան էական գիծն են կազմում։

Բանաստեղծութիւն, քերթուած ու պոէմա, ոտանաւոր ու քառեակ է սփռուած ֆարսերէն բոլոր սեռի գրուածքներում։ Այդ երևոյթը նկատելի է նոյն իսկ հասարակ խօսակցութիւնների մէջ։ Կարծես խօսքին ազդեցութիւն և հնչիւնին երաժշտական գունաւորում տալու ցանկութեամբ, մի քառեակ, յանգաւոր մի ասացուածք, անսպասելի կերպով, բայց նկատելի ձայնարկութեամբ խօսքին է խառնւում և նրան քաղցրութիւն ու գրաւչութիւն տալիս։

Թոյլ են, կիսատ և գուցէ խորթ այն գրական երկերը, ճառերն ու դասախօսութիւնները, որոնք համեմատած չեն բանաստեղծական կտորներով։

Երբեմն յօդուածներն էլ են այդ զարդարանքով պճնուում։

Սա, ի հարկէ, ամբողջովին չի հաստատում այն կարծիքը թէ այս երևոյթը ազգային առանձնայատուկ հոգեբանութեան արդիւնք է։

Գուցէ սա հնաւանդ սովորութեան մի պարտադրութիւն է, որ շարունակւում է մինչև այսօր և դեռ պիտի ապրի երկար ժամանակ։ Կամ գուցէ ժողովրդական ստեղծագործական ոյժի անդրադարձումն է, որ արտայայտւում է կեանքի և գրքի մէջ։ Եւ վերջապէս գուցէ բնութեան հզօր ազդեցութեան հետևանք է, որ երևան է գալիս այնքան հարազատօրէն։

Չքննենք։ Սրանք հարցեր են, որ թէական լինելով՝ լուրջ, մանրակրկիտ ուսումնասիրութեան կարիք ունեն, այն էլ մասնագէտների կողմից. մանաւանդ որ մեր նիւթի սահմաններից էլ դուրս են։

Չքննենք. բայց շեշտենք այն փաստը, որ ֆարսերէն գրականութեան մէջ շատ քիչ են արձակ և թատերական գրուածքները։ Առաջինն այն մաքով, ինչ հասկացւում է վէպի, վիպակի ձևով գրուած գեղարուեստական երկը։

Պէտք է ասել, սակայն, որ մեր խօսքը բա-

ւարար չափով գոյութիւն ունեցող և օրէցօր հարստացող թարգմանականի մասին չէ։ Խօսքը ինքնուրոյն գրուածքներին է վերաբերում։

Թարգմանական գրականութիւնը ֆարսերէնում սկսել է շատ վաղուց։ Ժամանակի ընթացքում, գլխաւորապէս արաբերէնից, ապա և եւրոպական լեզուներից շարունակաբար թարգմանութիւններ են արել, որոնց թւում, ի միջի այլոց, եղել են նաև մի շարք արժէքաւոր երկասիրութիւններ։

Այդ շարժումը աւելի զարգացել է՝ մանաւանդ տպարաններ հաստատելուց յետոյ։*

---

*) Կրթական նախարարութեան տեղեկագրի հաւաձայն, արաբական տառերով առաջին տպարանը հիմնուել է 1500 թ-ին։ Իրան մուտք է գործել 1780ական թուականներին, սակայն առաջին այդ տպարանից ոչ մի հրատարակութիւն չկայ ձեռքի տակ։

1812-ին Թաւրիզում հաստատուած տպարանից ձեռքի տակ կայ «Ֆաթհնամէ» (Յաղթութեան տեղեկագիր) անունով մի թերթիկ, որ ռուս-պարսկական պատերազմից Իրանեան մի յաղթանակի մասին է խօսում։ Այդ տպարանն իր գոյութիւնը շարունակել է մինչև 1829 թիւը։

1823-ին Թէհրանում հիմնուած տպարանը հրատարակութեան է աւել «Մօհարրէզէլ-Ղուլուբ» (Այրուած սրտեր) գիրքը։ Կարճ ժամանակից յետոյ տպարանների թիւը սկսել է բազմանալ և տարածուել երկրի զանազան կենտրոնները։

Այդ ժամանակ է—այսինքն 19-րդ դարի կէսերին, որ ինքնուրոյն արձակ գրուածքների հրատարակութեան ուղղութեամբ փորձեր են կատարուում։

Հրատարակուած գրքերի բովանդակութիւնը մեծ մասամբ հէքեաթներ են, հէքեաթանման պատմուածքներ, կամ, այսպէս ասած, առակներ կենդանիների կեանքից։

Այս մարդում առաջին օրինակը հանդիսանում է Նաղի-Բէյ-Մեմալէքը (Շահնշահի պալատում հէքեաթ պատմողը)։ Նրան հետևում են շուտով մի քանի բարձրատիճան հեղինակներ և մէկը միւսից ոգևորուած՝ հրատարակութեան են դարձնում։ Այնպէս որ կարճ ժամանակուայ ընթացքում լոյս են տեսնում «Իսկանդարնամէ», «Ամիր-Արսլան», «Ալէֆ-Լէյլ» «Ըմուզը Համզէ» և այլն, մօտ երեսուն գիրք, արձակ հէքեաթներ, պատմուածքներ ու առակներ։

Հարկ չկայ խօսելու այդ գրուածքների գեղարուեստական յատկութիւնների և նրանց գրական արժէքի մասին։ Ցիշենք միայն, որ նրանք, ի միջի այլ պակասութիւնների, հրատարակւում էին առանց հեղինակների անունները յիշելու այնպէս, որ այժմ դժուար է լինում որոշել թէ իւրաքանչիւր գրքի հեղինակն ով է։

Արձակ գրուածքների հրատարակութիւնը մի նոր խթան է հանդիսանում, որ աստիճանաբար

հրապարակ իջնեն մի շարք թարգմանիչներ—արքայազն Մահամէդ Թահէր Միրզա, Մ. Հասէյն Ագիբ, Ֆրուղի, Էհթիմադը-Սալթանէ և ուրիշներ։ Նրանք եւրոպական լեզուներից, մեծ մասամբ ֆրանսերէնից և անգլիերէնից թարգմանում են երկարաշունչ վէպեր, ինչպիսիք են «Կոմս Մոնթէ Քրիստո»,«Երեք հրացանակիրներ»,«Սէր և Խանդ» «Անգլուհին», «80 օրուայ համբորդութիւն» և այլն։

Գրական այս շարժումը, սակայն, իր սկսած թափով յառաջանալ և զարգանալ չի յաջողում։ Նոյն իսկ իր սկզբնական ընթացքն էլ պահել չի կարողանում և կամաց-կամաց թուլանում է։

Բարձրաթռիչ և քաղցրալուր բանաստեղծութեան վարժուած և նրանով ապրող ընթերցողը, բնականաբար, սիրել չէր կարող այդպիսի արձակ գրուածքների տարածուն ընդարձակութիւնը և ծաւալուն ոճը։

Ընթերցողի հոգին փնտռում էր մի քառեակ, որ փիլիսոփայական միտք և խորին իմաստ բովանդակէր, որ մտածել և խոկալ տար։ Ընթերցողը հետապնդում էր մի երկտողի, որ խորհուրդ և խրատ պարունակէր, սեղմ մի ոտանաւորի, որ կենցաղական լրիւ պատկեր ընդգծէր։ Նա գրական երկի մէջ երաժշտականութիւն, յանգ, բառախաղ էր որոնում։

Արձակ գրուածքները, մանաւանդ թարգմանութիւնները զուրկ այդ տարրերից՝ ի հարկէ

նրան բաւարարել չէին կարող։

Արձակ ինքնուրոյն և թարգմանական որոշ հրատարակութիւնների ժամանակաւոր յաջողութիւնը պիտի վերագրել այն փաստին, որ նրանց հեղինակները բարձրաստիճան անձնաւորութիւններ էին։ Այդ անձինք այնքան չէին մտածում գրքերի տարածման և սպառման մասին, որքան գրական շարժման մասնակից լինելու պատուին արժանանալու ցանկութիւն կամ գրական անձ համարելու մտահոգութիւնն ունէին։ Մի կոչում, որ այն ժամանակ խիստ յարգի էր բարձր շրջաններում։

Այսպէս թէ այնպէս իբրև բարձր շրջանի ցանկութեամբ սկսուած մի շարժում, գրական այս փորձը, ճիշտ է, արմատ բռնելու պատրաստի հող չի գտնում, և պայմանների փոփոխութեան հետևանքով համարեա թէ դադարում է գոյութիւն ունենալուց, բայց և այնպէս, հէնց իբրև փորձ հանդիսանում է խիստ գնահատելի մի նախաձեռնութիւն և գրական նոր ուղղութեան նախապատրաստական աշխատանք, որ շուտով տալիս է իր արդիւնքները։

Մեծ մասամբ պաշտօնական հանգամանք ունեցող անձանց կողմից դրուած հիմքի վրայ է, որ կարճ ժամանակից յետոյ, թուլացած այդ շարժումը վերսկսում է նոր թափով և մի քիչ աւելի իրական ձևով։

Այս անգամ նա երևան է գալիս իբրև ժողովրդական պահանջի անմիջական հետևանք, իբրև ժամանակի բնական արտայայտութիւն։

Այդ նոր թափը տեղի է ունենում սահմանադրական շարժումների անմիջական ազդեցութեան տակ։ Նոր իրաւակարգի սկզբնական շրջանում, երբ արթնացած մտքերը քաղաքական փոփոխութիւններին համագօր հասարակական նոր արժէքների որոնումներ էին կատարում։ Եւ նոր վիճակի հեռանկարները ուրուագծելուն զուգընթաց գրական նորութիւնների ցանկութիւն յայտնաբերուում։

Կապանքների խորտակման այդ օրերումն է, որ աննախընթաց մի շարժման մէջ է դրուում ապագրականմամուլի գործունէութիւնը։ Սկսւում և լայն ծաւալ է ստանում գրաւոր քարոզչութիւնը՝ լինի այդ թռուցիկների թէ պարբերականների միջոցով։

Հիմնական փոփոխութեան է ենթարկւում մինչ այդ անգոյն և խեղճ լրագրութիւնը։ Հանդէս են գալիս նորանոր օրգաններ լայն ծաւալով և բազմակողմանի բովանդակութեամբ։ Գաւառների մեծ մասն ունենում է իր սեփական թերթերը։ Օրուայ հրատապ հարցերի քննութեամբ և նորանոր խնդիրների արծարծումով ըղբաղուող մամուլը մեծ չափով դարկ է տալիս ընթերցանութեան և նոր հրատարակութիւնների

համար նպաստաւոր պայմաններ ստեղծում։

Եղած պահանջին բաւարարութիւն տալու համար, այդ ժամանակամիջոցում, հեռզհեռէ հրատարակւում են մի շարք ինքնուրոյն գրուածքներ, ինչպիսիք են օրինակ՝ «Էբրահիմ Բէկ» (Հեղ. Հաջի Զէյնալ-Աբդին) 3 հատորից բաղկացած, որ մինչև 6-րդ հրատարակութիւնն է ունեցած, որ մինչև 6-րդ հրատարակութիւնն է ունենում։ «Շահրիարը Հուշմանդ» (Հեղ. Շէյխ Էբրահիմ Զանջանի), «Շամս ու Թողրա» (Հեղ. արքայազն Մ. Բաղրը Միրզա Խոսրովի) և այլն։

Մինչև 1914 թ. համաշխարհային պատերազմը, ֆարսերէն հրատարակւած ինքնուրոյն երկերի թիւը հասնում է 78-ի, որից 21 վէպ, 30 պատմուածք, 8 առասպել և 18 թատերգութիւն։

Թարգմանական երկերի թիւը բարձրանում է շուրջ 110-ի, որով հրատարակւած գեղարուեստական բովանդակութիւն ունեցող գրքերի ընդհանուր թիւը կազմում է մօտ 190։

Պատերազմի շրջանում և նրանից յետոյ մօտ 10 տարի, համարեա նոր հրատարակութիւններ չեն լինում, մասնաւորապէս վէպերի տպագրութիւնը համարեա դադարում է Իրանում։

Ամբողջ այս տաս տարւայ ընթացքում հազիւ 10 վէպ է լոյս տեսնում։

Այդ ուղղութեամբ եղած գրական շարժումը նոր թափ է ստանում 1925 թ-ից և հիմնական ու համեմատաբար արագ քայլերով զարգացման

ուղին բռնում։

Իրար յետևից լոյս են տեսնում գիտական, մանագիտական պատմական երկասիրութիւններ և բազմաթիւ դասագրքեր տարրականից մինչև բարձրագոյն դպրոցների դասաւանդութեան անհրաժեշտ ձեռնարկներ։

Նրանց զուգընթաց՝ անընդհատ չափերի է հասնում նաև գեղարուեստական ինքնուրոյն և թարգմանական հրատարակութիւնների թիւը։

Այս վերջինի յառաջդիմութիւնը ցոյց տալու համար տանք մի փոքր համեմատութիւն։—Մօտ տաս տարւայ ընթացքում (1925—1936) անցեալի հետ համեմատած հրատարակւած գեղարուեստական երկերի թիւը ընդհանուր կերպով աւելանում է 4 անգամով։ Անցեալի 190 հատորի փոխարէն լոյս է տեսել աւելի քան 720 հատոր (Այս թվի մէջ չեն հաշուած արտասահմանում կամ երկրի զանազան մասերում հրատարակւած բայց անյայտ մնացած երկերը)։

Տպագրւած այս 720 հատորից մօտ 250-ը ինքնուրոյն է (այսինքն երեք անգամ աւելի անցեալից) իսկ 470-ը՝ թարգմանական, որի խոշորագոյն մասը վէպ է, մնացածը պատմուածք, պատկեր, թատերգ և այլն։

Վէպերի մեծ մասը թարգմանւած է ֆրանսերէնից (220), ապա անգլիերէնից (34), արաբերէնից (30) գերմաներէնից (24), ռուսերէնից (11) և զանազան լեզուներից (11)։

Վէպը և վէպիկը աւելացել է 7 անգամ, թատերգութիւնը մօտ երկու անգամ, ասասպելը 4 անգամ, պատմուածքն ու միւսները համարեա մնացել են հին դրութեան մէջ։

Այն փաստը, որ վերջին տասը տարւայ ընթացքում մօտ 200 ինքնուրոյն գեղարուեստական երկ է լոյս տեսել, ցոյց է տալիս թէ ինչպիսի արագ ընթացք է ունեցել վիպագրութիւնը վերջին շրջանում։

Գրքերի հրատարակութեան գործին մեծ զարկ են տուել նոր հիմնուած կամ հին գրավաճառանոցները, լոյս ընծայելով ինքնուրոյն և թարգմանական վէպեր ու վիպակներ։ Այս ուղղութեամբ ամենից մեծ աշակցութիւնը, գուցէ, հանդէս է բերել «Խաւէր» (Արևելք) գրավաճառանոցը, որ հրատարակել է 262 կոր գիրք։ (վէպ՝ինքնուրոյն 30,թարգմանական 112, պատմուածք 127, թատերգ 3) այսինքն տպագրուած ֆարսերէն գրքերի մօտ մի երրորդը։ *)

Նոր ներշնչում տալով հին հեղինակներին, ստեղծուած նպաստաւոր պայմանները, միաժամանակ, ասպարէզ են բերել նոր գրողներ, աւելի շնորհալի և տաղանդաւոր վիպագիրներ, որոնք ֆարսերէն գեղարուեստական գրականութեան նոր դարաշրջանի սկիզբն են դրել։

*) Տեղեկութիւնները վերցնում ենք «Խաւէր» գրավաճառանոցի գրացուցակից

Ժամանակագրական կարգով առաջնորդուելու դէպքում պէտք է ընդունել, որ այս շարժման նախաձեռնողները հանդիսանում են նախ՝ Նաղիբը—Մէմարէքը իր ժամանակակից բարձրասրտման հեղինակներով, ապա Հաջի Զէյնալ-Աբդինը, Զանջանին, Խոսրովին, Քազըմին և այլն։

Սակայն գրական-գեղարուեստական տեսակէտից հարցին մօտենալով, գտնում ենք, որ ֆարսերէն արդիական վէպի կերտողներ ներկայանում են նախ՝ շնորհալի վիպագիր Մ. Մ. Հէջազին, ապա Ս. Հէդայէթը, Մ. Նասրին, Մ. Քազըմին, Դրհաթին, Խալիլին, Սաֆանին և այլն։

Մ. Մ. ՀԷՋԱԶԻՆ գրական ասպարէզ է իջնում 1923-ին, բայց իր առաջին վէպը «Հօմա» (հերոսուհու անունը) անունով հրատարակութեան է տալիս 1928-ին։ Յաջորդ տարին լոյս է տեսնում նրա երկրորդ վէպը «Փարիչէհր» (հերոսուհու անունով,) որը նոյնպէս ջերմ ընդունելութեան է արժանանում։

Այս երկու վէպերը, որքան էլ նորութիւն էին ֆարս գրականութեան համար, այնուամենայնիւ ապատ չէին դէպի հինը եղած հակումից։ Նրանք պահած ունէին կլասիկ երկի գոյնը և, ինչու չէ, նաև կառուցածքը։

Նման պակասութիւններից զերծ է հեղինակի մեծ վէպը՝ «Զիբա» (հերոսուհու անուն, առան-

ձին նշանակում է գեղեցիկ) — երկու հատոր-որ Իրանի մօտիկ անցեալի պաշտօնէութեան կեանքից է վերցրած։

Այս վէպով հեղինակը երևան է գալիս իր տաղանդով և գրելու ամբողջ շնորհքով։ «Զիբայի» մէջ կեանքը ներկայացուած է խիստ հարազատօրէն, իրական պատկերներով և ամբողջացրած տիպերով։

«Զիբա»-ի՝ առաջին հատորը լոյս է տեսնում 1932 թ-ին և հեղինակին միանգամից յայտնի դարձնում ամբողջ Իրանում և դուրսը։

Հակառակ այն հանգամանքին, որ «Զիբա»ն դեռ աւարտած չէ և մի նոր հատոր էլ պիտի գայ լրացնելու այն, այնուամենայնիւ 1934-ին վէպը երկրորդ տպագրութիւնն է ունենում։ Այդուհանդերձ սակաւաթիւ է, իսկ պահանջը՝ շատ։ Սպառուած են նոյնպէս հեղինակի միւս երկերը։

Իրանի դերատեսներից մէկը «Զիբան» թատերգութեան վերածելով, մի քանի անգամ յաջող բեմադրութիւն է ունեցել։

Հեղինակի վերջին գրուածքը «Այինէ»(Հայելի) անունով, պարունակում է 20 փիլիսոփայական խորհրդածութիւններով պարփակուած կենցաղական պատկերներ։

«Այինէ»ն լոյս է տեսել 1932-ին և թարգմանուել է անգլիերէն, գերմաներէն, իսկ ֆրանսերէնի համար առաջարկ է եղել հեղինակին։

Վերջին տարիներում հեղինակը զբաղուած է եղել «Այինէ»ի երկրորդ հատորի նիւթերի պատրաստութեամբ։

Մ. Մ. Հէջազու վէպերի բարձր արժէքը կայանում է նրանում, որ նրա ընտրած նիւթերը այժմէական և առօրեայ լինելով, յաջող կերպով զարգացրած և անկեղծ շնչով պարուրուած բնական կառուցուածք ունեն։ Տիպերը գծուած են հարազատօրէն և լրիւ։

Մ. Հէջազու ոճը սեղմ է, հարուստ և պատկերաւոր։ Ուժեղ է բանաստեղծական գիծը, մանաւանդ բնութեան տեսարանների նկարագրութեան ժամանակ։

Գրում է կենդանի հետաքրքրութեամբ և այնքան խոր, որ ընթերցողին անխուսափելի խոկումների է մղում։

Մ. Հէջազու վէպերի գերապանցութիւնը աչքի է խփում մանաւանդ, երբ համեմատութեան են դրուում նրանից առաջ եղած հրատարակութիւնների հետ։

Իր վէպերով, այս հեղինակը ֆարսերէն արդի գրականութեան մէջ աւելի իրական ուղղութիւն ընտրեց և գալիք նոր վիպասանների համար գրական նոր ուղի հարթեց։

ՍԱԴԷՂ-ՀԷԴԱՅԷԹԸ գրական ասպարէզ է իջնում 1930-ին, հրատարակութեան տալով «Զէնդէ բը գուր»-ը(կենդանի՝ գերեզմանում)։ Ցա-

ջորդ տարին տալիս է «Անիգանը»։ 1932-ին ու-
շադրութիւն է գրաւում իր «Սէ դաթէ խուն»
(Երեք կաթիլ արիւն) պատմուածքների հաւաքա-
ծոյով։ 1933-ին լոյս է տեսնում «Մայէի Ռուշան»
(Լոյսի սուերները) հատորը։

ՄՈՒՍԱ ՆԱՍՐԻՆ յայտնի է իր «Էշխ ու
Սալթանաթ» (Սէր և իշխանութիւն) երկհատոր
վէպով, որ լոյս է տեսնում 1925-ին և ապա իր
երկրորդ տպագրութիւնն ունենում (առաջին հա-
տորը Բոմբէյում)։ 1932-ին հրատարակւում է
«Շահզադէ խանում» (Արքայազնուհին)։

ՄՈՒՇԱՖԱՂԸ ԲԱՋՄԻ, լոյս է ընծայում
«Թէհրանը Մախուֆ» (Սոսկալի Թէհրան) 4 հա-
տորից բաղկացած, 1929-1930-ին։ Առաջին երկու
հատորն ունենում են երկրորդ տպագրութիւն։
«Գոլը փաժմորդէ» (Թառամած ծաղիկ) 1929-ին,
իսկ յաջորդ տարին «Ռաշքը փոր Բըհա» (Թան-
գագին նախանձ)։

ԽԱԼԻԼԻ, 1931-ին լոյս է տեսնում նրա «Ռուզ-
գահը սիահ» (Սև ճակատագիր) «Էնթըզամ» (վրէժ)
«Ասրարը շաբ»ը (գիշերային գաղտնիքներ)։ Այս
վէպերները ունենում են երկրորդ տպագրութիւն։
«Խիալաթ» (խոկումներ) 1930 ին, «Դատանը
Էմրուզ» (Այսօրւայ պատմութիւն) երկու հատո-
րով լոյս է տեսնում 1932-ին։ Ապա մի շարք
վէպերներ։

Մ. ՄԱՅՈՒԴ (Դըհաթի) 1932-ին լոյս է
ընծայում «Թաֆրիհաթը շաբ»ի (Գիշերային ըզ-
բօսանքները), երկու հատոր։ Երկու տարուց յետոյ
ունենում է երկրորդ տպագրութիւն՝ «Թէլաշ-
Մուաշ» (Ջանք ու տարուստ) նոյնպէս 1932-ին,
որ այժմ սպառուած է, «Աշրաֆը Մախլուղաթ»
(Ազնիւ էակ) 1934-ին։

ՌՈՒՀԻՄ ՍԱՖԱՒԻ գրել է «Շահր-Բանու»
երեք հատորից բաղկացած, որ լոյս է տեսնում
1931-ին։

Կան և մի շարք այլ գրողներ, որոնք մէկ
կամ մի քանի հատորներ են հրատարակել, բայց
արժէք չեն ներկայացրել և մնացել են անու-
շադիր։

Այս երկերն ընդհանրապէս արժէքաւոր են
այն տեսակէտից, որ նոր սկսող գրականութեան
առաջին երախայրիքներն են ներկայանում և
ներկայ Իրանի կենցաղի, մտայնութեան և սո-
վորութեան պատկերն են արտայայտում։

Իրանում էլ ամեն վայրի պէս, վիպագրու-
թեան զուգընթաց հանդէս է գալիս նաև թատեր-
գութիւնը։ Սակայն գրական այս ճիւղը վիպա-
գրութեան չափ յաջողութիւն չի ունենում։

Մի քանի տարի առաջ, պատմական ան-
ցեալից և ընթացիկ կեանքից վերցրած թատեր-
գութիւններ ողողել էին հրապարակը։

Մէկը միւսի յետևից թխւում և ժողովրդին

էին հրամցնում շինծու տեսարաններով, անբնական և երևակայական գործողներով, ձանձրալի մենախօսութիւններով և բռնազբօսիկ կապակցութիւններով շաղախուած պիեսներ։ Թատերգութիւններ, որ գիշերը մէկը կարելի էր գրել, ինչպէս որ ինքնագովութեամբ արտայայտւում էր նման թատերգներ ամենից շատ արտադրող հեղինակներից մէկը։

Բայց ժամանակաւոր այդ ոգևորութիւնն իր բնական արդիւնքին է հասնում. դադարում է թխածոյ, անարժէք թատերգութիւնների արտադրութիւնը, ֆարս գրականութեան մէջ, իբրև ուշադրութեան արժանի գրուածք, մի երկու պիես թողնելով։

Գրական այս ճիւղի մէջ էլ, ինչպէս վիպագրութեան մէջ շնորհալի, կարող և գրական յատկութիւններով օժտուած գրողներ կան։ Սակայն ընթերցողների ոչ այնքան ջերմ վերաբերմունքը արգելք է հանդիսանում նրանց զարգացման։

Վերջերս, սակայն, նկատելի է մի շատ մխիթարական երևոյթ։ Երիտասարդութիւնը, մանաւանդ նոր սերունդը, բոլորովին այլ ուղղութիւն է բռնում։ Մի ուղի, որ թւում է թէ մեծ զարկ պիտի տայ ֆարսերէն վիպագրութեան և հարստացնի նոր գրականութիւնը։

Այդ ուղղութիւնը կայանում է այն աննախընթաց հետաքրքրութեան մէջ, որ երիտասարդ

ընթերցողը ցոյց է տալիս դէպի գեղարուեստական պատուածքն ու պատկերը։ Ինքնուրոյն թէ թարգմանական լինելու հանգամանքը, անշուշտ, նշանակութիւն ունի, սակայն ոչ այնքան կարևոր որ ազդել կարողանայ ընթերցողի հակումների վրայ։

Մի երկու տարի առաջ «Մէհրգան» հանդէսի իր ընթերցողներին առաջադրած հարցարանի կէտերից մէկն էլ այն էր թէ «ինչ են դերադասում կարդալ»։

Ուսանող և արտադպրոցական սերունդը իր պատասխաններով մեծ մասամբ յիշել էր նոր արձակագիրների, ապա եւրոպական վիպակների թարգմանիչների անունները։

Եւ կարծես ընթերցողների այս վերջին նախասիրութեանը ոյժ տալու նպատակով, որոշ օրաթերթեր հէնց այդ ժամանակից սկսում են կարճ արձակներ և հետաքրքրական պատմուածքների, պատկերների ու երգիծական կտորների թարգմանութիւններ տալ։

Թերթերից նախ մէկը, ապա և միւսները յատուկ սիւնեակ են յատկացնում այդ «օրւայ պատմուածք»-ին և համարեա իւրաքանչիւր համարում թարգմանական կամ ինքնուրոյն մի կտոր տպագրում։

Իսկ «Մէհր» և «Մէհրգան» պարբերականների (առաջինը ամսագիր, երկրորդը երկշաբա-

Հայաստանի Պետական Գրադարան
Гос. Библиотека
ZUUՈ-Арм ССР
Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան

թաթերթ) խմբագրութիւնը նկատելի հետևողականութեամբ ոյժ է տալիս ինքնուրոյն գրուածքների զարգացման։

Հրահրելու համար արձակ գրուածքների ընթերցումը, խմբագրութիւնը մրցանակներ է նշանակում լաւագոյն գեղարուեստական վէպիկների համար, պատմուածքի նիւթեր է տալիս իր ընթերցողների գրելու ընդունակութիւնը զարգացնելու համար, հեղինակներին խրախուսում է և գրելու կոչ անում։

Վերջին տարիների ընթացքում, կարելի է ասել, անթերի ճշտապահութեամբ «Մէհրգանի» իւրաքանչիւր համարում տպագրւում է ինքնուրոյն մի պատմուածք կամ պատկեր։

Իրրև շնորհալի գրող, այդ ուղղութեամբ առ այժմ երևան է եկել մի գրող—Հ. Մ. Համիդը։

Գրում է առաջին դէմքով, կարծես իր հետ պատահած դէպքերն է պատմում, սահուն և թեթև ոճով։ Նիւթերն իրական և առօրեայ կեանքից վերցրած, պատկերացնում է խոշոր և վրձինի անփոյթ շարժումից առաջացած գծերով։

Բոլոր գրուածքներում անխուսափելիօրէն ըզգացւում է բա՛ստեղծական հակումը։

Պատկերներն ընդհանրապէս միտումաւոր են (դենդենցիոզ) երբեմն բարոյական քարոզնեռով խառն, մերթ բռնազբօսիկ շարայարութեամբ և շատ անդամ անբնական երևոյթների դասաւորութեամբ և զուգադիպութեամբ։

Այդուհանդերձ, մի քանի այլ թերութիւնների գոյութեամբ իսկ, որ ուկնակ գրողի մօտ անխուսափելի է, Հ. Մ. Համիդը գրելու շնորհք ունի։ Խմորը կայ և յոյսեր էլ կան որ զարգանալու ուղին է բռնել։

Հ. Մ. Համիդը լոյս է ընծայել իր պատկերների հաւաքածուն երկու հատորով։ Առաջինը, որ պարունակում է 18 պատկեր, կրում է «Արմըղանը զէնդէգի» (կեանքի ընծայ) անունը, երկրորդը «Անդիշէհայի Ջէւանի» (երիտասարդական խորհուրդներ)։

Հայ մամուլը մինչև այժմ ոչ մի առթիւ չի արտայայտւել Փարսերէն գրական նոր շարժման և նրա ընթացքի մասին։

Հայ ընթերցողին անծանօթ են մնում Իրանի նոր գրողներն և նրանց երկասիրութիւնները։

Հայ գրագէտի համար Փարսերէն գրականութիւնը դեռ սահմանափակւած է մնում Ֆէրդովսու, Սաադիի, Օմար Խայեամի, Հաֆէզի և Մասնաւիի հաւաքածուների մէջ։ Բացառիկ անհատներ միայն տեղեակ են մի քանի նոր քնարերգուների անուններին՝ Մալէք-Շօարա, Իրաջ Միրզա, Էշխի և գուցէ Խանում Փարվին։ *)

*) Տիկ. Փարվինի բանաստեղծութիւնների ժողովածուն լոյս տեսնելով մի երկու տարի առաջ, շատ ջերմ ընդունելութեան արժանացաւ։ Փարսերէն մամուլը բազմաթիւ գրախօսական յօդուածներով ներբողեց ղ գնահատեց բանաստեղծուհու տաղանդը։

Ծանօթ են լոկ անունների, բայց ոչ երբէք նրանց բանաստեղծութիւնների հետ։

Զմանենք ցաւալի այս երևոյթի պատճառների քննութեան մէջ։ Նշեմենք միայն, որ այս հարցում մեղքի ծանրութիւնը բարդւում է պարսկագէտ գրական ոյժերի վրայ։ Նրանց, որ այնքան անփոյթ են դտնւել իրենց վրայ ընկած վերին աստիճանի կարևոր պարտականութիւնը կատարելու և Ֆարս ու հայ գրականութիւնները փոխադարձաբար ծանօթացնելու աշխատանքի մէջ։

Եթէ ընդունենք այն սկզբունքը, ըստ որի նկարագրի լայն և խոր ծանօթութեան շնորհիւ մարդկանց մէջ մտերմութիւն է հաստատւում, և միւս կողմից՝ եթէ առաջնորդւենք այն տեսակէտով, որ իւրաքանչիւր ժողովրդի գրականութիւնը նրա կեանքի իրական հայելին է, ապա ուրեմն երկու գրականութիւնների փոխադարձ ծանօթութիւնը պիտի դայ աւելի ևս ամրապնդելու գոյութիւն ունեցող կապերի սրտակցութիւնը։

Որովհետև Ֆարս և հայ հայելիների արտացոլման միջոցով փոխադարձաբար աւելի մօտից պիտի ծանօթանան միմեանց հոգեկան ապրումների, գաղափարական ձգտումների և իրական տենչերի հետ։

Աւելի պարզ և վճիտ կերպով պիտի տեսնեն իրար մտքերի և տեսակէտների ուղղութիւնը,

բարոյական հասկացողութիւնները և կենցաղային սկզբունքները։

Այդ միջոցն է, որ պիտի վերացնի ամեն խարխափում՝ եթէ կայ և ցրի ամեն տեսակի թիւրիմացութիւն, եթէ երբ և իցէ կլինի և աւելի եղբայրական ու անկեղծ դարձնի սերտ յարաբերութիւնները։

Այս տեսակէտից առաջնորդւած, մենք պիտի աշխատենք իրագործել այդ նպատակի այն մասը, որ հնարաւոր է, և առաջին հերթին հայ ընթերցողներին ծանօթացնել Ֆարսերէն նոր գրողների հետ։ Հայ գրականութեան թարգմանութիւնը Ֆարսերէնի՝ թողնում ենք մօտիկ ապագային։

Առ այժմ բաւականանում ենք երկասիրութիւնների նմոյշներ տալ և հեղինակների մասին թռուցիկ կարծիք յայտնել, ընթերցողին թողնելով իր գնահատականը տալու իւրաքանչիւր գրւածքի, գուցէ և նրա հեղինակի գեղարւեստական ըմբռնումների և շնորհքի մասին։

Պիտի աշխատենք հնարաւորութիւն ստեղծել, որպէսզի «նմոյշները» դառնան ամբողջ երկերի թարգմանութիւնն և հեղինակների վերաբերմամբ արտայայտւած ընդհանուր կարծիքը վերածւի մշակւած ուսումնասիրութեան։

Առաջին նւագ նմոյշներ տալիս ենք Մ. Մ. Հէջազիի գրւածքներից։

Հանդիսանալով ֆարսերէն գրականութեան նոր ուղղութեան կարևոր ոյժերից գուցէ առաջինը, նա այժմ էլ, իբրև շնորհալի գրող, շարունակում է առաջնակարգ տեղ գրաւել ֆարս գրական գործիչների շարքում և իր մասնակցութիւնը բերել գրական աշքի ընկնող հանդէսներին։

Հատուածները վերցուած են նրա վերջին հրատարակութիւն «Այինէ»-ից։

Թարգմանական գործում հեղինակը բերել է իր սիրայօժար աշակցութիւնը։

Յ. ԷԼՄ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

. . . Բնագիր երկը օտար լեզուով թարգմանել գեղեցիկ դէմքը նկարագրելուն է նմանում։

Թէկուզ թարգմանիչը իր գործը իրականից էլ աւելի սիրուն դուրս բերի, բայց երբէք այն դէմքը լինել չի կարող։

Խօսքի շնորհը եւ գեղեցիկ դէմքը պէտք է առանց քողի զգալ եւ տեսնել։

Երանի թէ համայն աշխարհի մարդկութիւնը մի լեզուով խօսէր։

Բայց մինչեւ անորոշութեան եւ գաղանիքների վարագոյրի վերացման այդ օրը կհասնի եւ մարդկութիւնը կգիտակցի, որ ներկայ անջատումները ցընորական եւ երեւակայական հիմունք են ունեցել, այո, մինչ այդ պէտք է շնորհակալ լինել թարգմանչի յոգնութիւնը յանձն առնողներից եւ գնահատել նրանց աշխատանքը։

Նրանց՝ որ տարբեր լեզուներ խօսող հասարակութիւններին իրար մօտեցնելով, նրանց միջեւ սիրոյ եւ բարեկամութեան կրակն են արծարծում։

Որովհետեւ գրականութիւնը ամենքի սրտի եզուն է. բոլոր սրտերը մէկ են եւ մի լեզու ունին։

Մ. Մ. ՀԷՔՋԱԶԻ.

Մ. Մ. ՀԷՋԱԶԻ

ԳՐԱԿԱՆԱԳԷՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Անցեալ դիշեր գրականագէտների հաւաքոյթում չքեղ հանդէս կար։

Ես ոչ միայն հրաւիրեալներից էի, այլ հանդիսի կազմակերպումը տեղի էր ունեցել մեծ մասամբ, իմ ջանքերի և աշխատանքների շնորհիւ։ Այդուհանդերձ հանդիսին ես ներկայ չեղայ։

Կարծեմ հրաւիրեալներից ոչ մէկն էլ ներկայ չէ եղել։

Հանդիսից բացակայելու ես ոչ մի օրինաւոր պատճառ չունէի։ Մտածեցի գուցէ մրսեմ կամ գուցէ նոր կօշիկը ոտքս սեղմի և կամ թէ, վերադառնալիս, գուցէ, կառք չճարի և նման բաներ...

Վերջապէս ժամանակն անցաւ և ես բոլորովին հրաժարուեցի հանդիսին գնալուց։

Այս առթիւ, սակայն, այս երկու օրս ներքին պայքարի մէջ եմ։ Զանցառութեանս իսկական պատճառն եմ ուզում իմանալ։ Ինքս ինձնից խիստ պատասխան եմ պահանջում, որովհետև մրսելու հաւանականութիւնը կամ կառք չգտնելու վախն ինձ չեն բաւարարում։

Պարզ է, որ սրանք բոլորը պատրուակներ են միայն և մէջտեղ ուրիշ խնդիր կայ։

Աժեն անգամ, որ մտաղրւում եմ դէպքն իր ամբողջութեամբ—սկզբից մինչև վերջ—աչքի առաջ բերել և խնդրի հանգոյցը գտնել, յիշողութիւնս շփոթւում և մտքիս կծիկն ուրիշ թելերի հետ է խառնւում։

Եւ որպէս զի դժուարութիւնը վերացնեմ, որոշում եմ պատմութիւնը գրել իր բոլոր մանրամասնութիւններով։

Այնտեղ, ուր մտքի սատանաները կը խզեն խորհրդածութեան դերձանները՝ կանգ կառնեմ, և հէնց որ նրանց յաղթահարած կը հեռացնեմ, գրել կը շարունակեմ։ Տեսնենք բանն ինչումն է։

Բանաստեղծ և գրող մի ընկեր ունեմ։

Բայց այդ ընկերակցութիւնը միայն ինձ չի վերապահւած։ Ով որ խելք ու հասկացողութիւն ունի, նրան իր ընկերն է համարում։

Գրականութեան օտար մարդիկ իսկ հաճոյք են զգում նրա բարեկամութիւնից։ Նրա հետ դէմ յանդիման եղող իւրաքանչիւր ոք իսկոյն ուրախ ու ժպտուն կերպարանք է ստանում։

Այն բոլոր հաւաքոյթներում, ուր բանաստեղծը ներկայ է, խօսակցութիւնների մի մասը նրան են ուղղւում իբրև իրական ներբող կամ կատակի ձևով ասւած գովաբանութիւն

Զարմանալին այն է, սակայն, որ գովաբանող նոյն մարդիկ, հեղինակի բացակայութեան ժամանակ, ոչ մի հեգնանք, խծբծանք և վատաբանութիւն չեն խնայում և հազար ու մի տեսակ պարսաւանք ու վիրաւորանքներ են ուղղւում նրա հասցէին։

Բարոյական սկզբունքներս կաբելիին չափ յարգած լինելուս համար, տգեղ այս ընթացքին ես մասնակցութիւն չեմ ունենում։ Ցիրաւի որ տգեղ է։ Մարդու ներկայութեանն այն աստիճան յարգանք ցուցադրել, իսկ բացակայութեանն այնչափ չարախօսութիւն անել։

Քանի որ որոշել եմ այստեղ ճշմարտութիւնն

ասել, ուստի պէտք է խոստովանեմ, որ այսպիսի հաւաքոյթներում եղածս ժամանակ առանձին մի հաճոյք էի զգում։—Որքան ընկերոջս վերաբերմամբ ծաղրն ու կատակը նուաստացուցիչ էր լինում, ես այնքան աւելի ուրախ էի լինում և ծիծաղկոտ հայեացքով չարախօսին խրախուսում։ Իսկ երբեմն էլ ասում էի։—

«Մէկի բացակայութեան նրա մասին խօսելը լաւ բան չէ. բաւական է»։

Այս խօսքերն ասելիս ձայնիս շեշտն այնպէս էր հնչում, որ անմիջապէս հասկացւում էր արտայայտածիս հակառակ իմաստը։

Որովհետև մտադրութիւն ունեմ զգացմունքներս բացայայտ և պարզ կերպով զատորոշելու, ուստի պիտի ասեմ, որ երբ արդարութեան խոշորացոյցով մտքիս խորքն եմ նայում, նկատում եմ, որ գրականագէտ հեղինակին վիրաւորելուց զգացածս հաճոյքն իր պատճառն ունէր։

Զգում էի, որ ուրիշները մտածում են այն մասին, որ նա ինձնից թէ աւելի լաւ բանաստեղծ է և թէ աւելի յաջող է գրում։ Ես ինքս էլ իւրովի, այս ճշմարտութիւնը խոստովանում էի։

Բայց այս կարծիքը իմ մտքիս մէջ փոխելու նպատակով, միշտ էլ, հեղինակի բացակայութեան ժամանակ, նրա բանաստեղծութիւնների ու գրուածքների պակասութիւններն էի ցոյց տալիս և այս ուղղութեամբ կարելիին չափ ապացոյցներ բերում։

Արդեօք այս մրցակցութեան և նախանձի զգացմունքի հետևանք պիտի համարել այն, որ բարեկամ բանաստեղծիս ընթացքն ու ձևերն իմ աչքում տարօրինակ և ծաղրի արժանի էին երևում,

Գուցէ։

Արդեօք ուրիշներն էլ, ինձ նման, նրա դիրքին նախանձելուց էր, որ նրան պարսաւանքի և կշտամբանքի առարկայ էին դարձնում։

Զգիտեմ։

Այդուհանդերձ, մեր բանաստեղծի ունեցած ընթացքն ու ձևերը (իմ արած խոստովանութեամբ հանդերձ) գտնում էի բաւական պարմանալի ու տարօրինակ։

Ուրիշներն այդ մասին աւելի չափազանցրած կարծիք ունէին։

Բանաստեղծութիւններ գրելով մեր հեղինակը երևակայում էր թէ տիրապետում է աշխարհի բոլոր գիտութիւններին, որ թափանցում է կեանքի բոլոր կնճիռների և բնութեան գաղտնիքների մէջ։ Նա նոյն իսկ ապագայ գիտութիւններն էլ էր նախատեսնում, սակայն այնքան թեթևամիտ չէր, որ գիտութեան մանրամասնութեան մէջ մտնէր։

Պէտք է ասել, որ նրա բանաստեղծութիւնների ու գրուածքների նիւթերը կազմում են նոյն այն մեծ, բայց պարզ մտքերը, որոնք մի քանի հազար տարուց ի վեր, մինչև հիմա, ով եկել՝ արտայայտել է մի ձևով։ Եւ արդիւնքի էլ չի հասել։—Ի՞նչու ենք աշխարհ եկել, որտեղից ենք եկել, ուր պիտի գնանք, ի՞նչու աշխարհը մշտապէս մեզ հետ քէնով է, ի՞նչ ոյժ է թագնուած սիրուհու աչքերում, որ մեր հոգին սրտից դուրս է քաշում։ Եւ այսպէս...

Այն տարբերութեամբ միայն, որ չի կարողանում բառերի յանգաւորումը Ֆերդովսու, Սաադիի կամ ուրիշների պէս յաջողել։

Գուցէ այս էլ նրա մեղքը չէ, որովհետև մենք, իրանցիներս, որոշել ենք այս բանաստեղծների նման այլևս չունենալ, այնպէս որ նրանց խօսքը վերջնական է։

Այն բոլոր հաւաքոյթներում, ուր մեր հեղինակը ներկայ էր լինում, խօսակցութեան առարկան նրա բանաստեղծութիւններն էին։ Պէտք է ականջ դնէին և գովաբանէին։

Եթէ որևէ մէկը ցանկանար թոյլ տալ իրեն հակաճառել՝ պէտք է կեանքից ձեռք վերցնէր։

Դժբախտաբար հեղինակը վեց ամսով դէպի Եւրոպա ճամբորդեց։

Եւ այն կարճ ժամանակամիջոցում նա կատարեալ տեղեկութիւններ ձեռք բերեց Եւրոպայի և Ամերիկայի բոլոր վայրերից և բոլոր գիտական—գեղարուեստական, քաղաքական և կրօնական հաստատութիւններից։ Այնպէս որ այս խնդիրների մասին խօսակցութիւն լինելիս նա անպայման պէտք է հակաճառէր։

Երանի թէ մեր բարեկամը միայն գրող և բանաստեղծ լինէր։ Փիլիսոփայ էլ էր։ Աշխարհը նրա համար մի բուռ հող էր։ Երկրային ստացուածքն ու պաշտօնը, նրա կարծիքով, գոյնզգոյն խիճեր են, որոնցով երեխաներ են խաղում։

Նա ծիծաղում էր այն մարդկանց վրայ, որոնց դիրքը, հարստութեան կամ պաշտօնի շնորհիւ, սնդիկի նման, մեծ կամ փոքր չափով փոփոխութեան է ենթարկւում։ Այդպիսի անձնաւորութիւններին նա, մարդկանց և անասունների մէջ գոյութիւն ունեցող, առանձին մի տեսակ էր համարում։

Այդ բոլորով հանդերձ, եթէ որևէ հաւաքոյթում

որևէ նախարար ներկայ լինէր, մեր փիլիսոփան նրա կողքին էր։ Նախարար չեղած դէպքում նրա խօսակիցը անցեալում նախարար եղած մէկն էր։ Իսկ եթէ հաւաքոյթում ոչ ներկայ և ոչ նախկին նախարար լինէր, նա խօսակցութեան կը բռնէր նախարարի տեղապահի հետ։ Թէև պետական ծառայութիւնն իր դիրքից ցած էր համարում, բայց և այնպէս վարչական աստիճանների հանդէպ կատարեալ յարգանք էր տածում։

Դիրք չունեցող խեղճ մէկը, որչափ էլ խելացի լինէր՝ փիլիսոփայի ուշադրութեանը չէր արժանանայ, որովհետև նրա երևակայութիւնն այնքան խոր մտքերի մէջ էր խորասուզած, որ մարդկանց հասկացողութիւնները հետազօտելու ժամանակ չունէր։ Արտաքին զարդարանքը ներքին կատարելութեան տեղ ընդունելով՝ հանգիստ կը մնար։

Վայ թէ ծառան թէյն առաջ նրա մօտ չտաներ. վեր կը կենար և հէնց հաւաքոյթում նրա հետ վէճի կը բռնէր։ Ընդհանրապէս, այս հարցում, ամէնքն էլ բարեկամիս նման են, այն տարբերութեամբ, որ նրանք իրենց դարվին և փիլիսոփայ չեն համարում, ուստի ինչ որ անում են բնական է դուրս գալիս։ Յետոյ, նրանք յատկութիւններ չունեն, հետևապէս նրանց ընթացքի դէմ առարկութիւններ չեն լինում։

Մի խօսքով մեր իմաստասէրի հոգեկան վիճակը խառնաշփոթ, ընթացքն էլ հաւանելի չէր։

Նախանձի հետևանք է այս, թէ իսկական իրողութիւն՝ չգիտեմ, բայց այդ է իմ կարծիքը նրա վերաբերմամբ։

Միայն թէ, շրջապատը մտածելով, որ չարտայայտած բանը չի հասկացւի, ժողովներում՝ նրա ներ-

կայութեանը ենթարկուում էր նրան, իսկ բացակայութեանը, նրա հասցէին ոչ մի վատաբանութիւն չէր խնայուում։

Մինչ այս սասծներս ներածութիւն էր։

Խնդրի սկիզբն այստեղից է սկսուում։—

Մօտ մի տարի էր, որ պ. փիլիսոփան Թեհրանից և Թեհրանի ժողովրդից ազատուել և ճամբորդութեան մէջ էր։

Ի հարկէ նրա դիրքը շատ աւելի բարձր և փառաւոր էր, որ թոյլ տար իրեն ընկերներին ու բարեկամներին նամակներ գրելու։

Բացի մի քանի շատ բարձրաստիճան և շատ խելացի անձնաւորութիւններից—օրինակ մի քանի վարչապետներ—ոչ մէկն այդ պատուին չէր արժանանում։ Վերջերումս պարզուեց, որ նոյն իսկ նրանց էլ այլևս նամակ չի ուղարկում։ Ապա թերթերից մէկը, կարևոր լուրերի բաժնում, նրա մահուան լուրը տուեց։ Միւս լրագիրներն էլ արտատպեցին այդ։

Լուրը կարդալուց յետոյ դէպի հանգուցեալ հռետորն ունեցած զգացումներս—լաւն ու վատը—կարծես իրար խառնուելով՝ փոխարկուեցին մի միակ զգացմունքի—դրուատանքի յարգանքի։ Նրա խօսքի հմտութեան ու կարողութեան, ինչպէս և նրա արտայայտութեան դիւթական բարձրութեան մասին այլևս ոչ մի կասկած չմնաց ինձ համար։

Փոշեպատ անկիւններից դուրս բերուեցի մոռացութեան տուած նրա բանաստեղծութիւնների ու գրուածքների հատորները։ Սրտիս աչքերն ու մտքիս ականջները փակող թանձր վարագոյրը բացուեց և նրա ոճի կազմութեան մէջ բնական օրէնքների ոյժն ու բառերից իւրաքանչիւրի մէջ երկնային ներշնչումը տեսայ։

Շնորհալիութեան այնպիսի տեղ էր գրաւել, որ նրան հասնելու երևակայութիւնն ինձ համար խենթութեան կը նմանէր։

Կարելիին չափ շտապով, մեր մէջ եղած ծանօթութեան թոյլ կապերն իրար միացնելով, յիշատակների ու գորովալից յիշողութիւնների շղթաներով ամուր հիւսեցի։

Գիշեր-ցերեկ հանգուցեալ ընկերոջս խօսքերի յիշողութիւնն էր զբաղեցնում ինձ։ Ուր որ հաւաքոյթ կամ ժողով էր լինում, այնտեղ պատրաստ էի ես մեռած ընկերոջս բանաստեղծութիւնների ընթերցումով ասպարէզ գրաւելու։ Կարծես թէ այդ քերթուածները ես էի երկնել։

Ունկնդիրների վրայ խոր ազդեցութիւն գործող իւրաքանչիւր բանաստեղծութիւնից կամ կտորից յետոյ, մեզնից ընդմիշտ հեռացած փիլիսոփայի ազնիւ բնաւորութեան, մեծ կարողութեան և բարձր արժանիքների մասին էի արտայայտուում։ Եւ ամէն անգամ այն անզուգական վեհութեան և յատկապէս մեր—նրա և իմ—մէջ եղած գերազանց բարեկամութեան ու յարգանքի մասին մի քանի դէպքեր պատմում։

Բարեկամիս կորուստի առթիւ այնպէս էի ցաւում ու ողբում, որ վշտագին վիճակս ներկաների վրայ ազդելով՝ նրանց սրտում կարեկցութիւն էր արթնացնում։

Շուտով պարզուեց, որ համակիրներ ու մրցակիցներ եմ գտել։

Գրականագէտների շրջանի անդամների մէջ նրանք, որ ամենից շատ էին աշխատում իմաստասէրի գիտական և բարոյական դիրքի նուաստացման ուղղութեամբ, այժմ՝

հանգուցեալի երկերի հրատարակութեան համար մէջ-
տեղ էին եկել և ամեն տեղ իրենց նրա բարեկամն էին
ներկայացնում։

Այս առթիւ սրտանց նեղացայ։

Բայց մեծ գիտունի մաքի հրաշալի արտայայտու-
թիւնները վերակենդանացնելու և յաւերժացնելու հա-
մար գործադրած նրանց ջանքերի առթիւ, նրանց և
իմ մէջ տեսակցութիւնների ժամանակ ես այնքան
շնորհակալութիւն էի յայտնում, որ կարծես թէ իմ
անձս էին ուզում պանծացնել։

Ամէն անգամ որ նրանցից մէկն ու մէկը ցան-
կանում էր հանգուցեալի հետ ունեցած բարեկամու-
թեան մասին ակնարկ անել, խօսքը կտրելով, առան-
ձին արտայայտութեամբ ապացուցում էի, որ այդ բա-
րեկամութիւնները արտաքին և անհիմն են եղել և
ինձնից բացի ոչ ոք նրա հետ սրտակից բարեկամ չի
եղել։

Այս ուղղութեամբ հետաքրքրելով տեսայ, որ
գրականագէտների շրջանում, ինչպէս և մտաւորական-
ների մէջ, բաւական հետաքրքրութիւն է արթնացել
դէպի ինձ և դիրքս բարձրացել։

Մի քանի սգահանդէսներից յետոյ գրականագէտ-
ների շրջանում անցաւ իմ առաջարկս և որոշուեց նախ՝
յաջորդ հինգշաբթի երեկոյ հանգուցեալ հեղինակի յի-
շատակին շքեղ մի հանդէս կազմակերպել, ապա և նրա
բանաստեղծութիւնների հաւաքածուն հրատարակելու
և նրա արձանը կանգնեցնելու համար հանգանակու-
թեան ձեռնարկել։ Այս նիստը ցնծագին աղաղակներով
փակուեց։

Այդ որոշման հիման վրայ՝ ամբողջ շաբաթը, ամեն

ջանք ու նեղութիւն յանձն առնելով, հանդիսի պատ-
րաստութեամբ զբաղուեցի։ Կարող եմ ասել, որ այս
հանդիսի կազմակերպումն իմ ճիգերի ու աշխատանքի
արդիւնքը պիտի համարել։

Հինգշաբթի առաւօտեան հանդիսին ներկայ լի-
նելու կատարեալ որոշումն ունէի։ Կէսօրեան մօտ,
երբ սովորականին պէս թերթը ձեռք առայ, հետևեալ
լուրը կարդացի։

—Քերմանշահից—մեր յատուկ թղթակցից ստաց-
ած լուրերի համաձայն, յայտնի բանաստեղծ ու գրող
պ... որի ցաւալի և արտաճմլիկ մահուան լուրն էր հասել
մի քանի ժամանակ առաջ, փառք Աստուծոյ, կենդանի է
և այս քանի օրերս Նաջաֆից Քերմանշահ պիտի վե-
րադառնայ և գուցէ շուտով Թեհրան անցնի։

Այսքանը գիտեմ, որ այս լուրը կարդալուն պէս
հոգեկան վիճակս բոլորովին փոփոխութեան ենթարկ-
ուեց, բայց թէ ինչպէս՝ չեմ կարող բացատրել։

Վերջապէս ես չիմացայ թէ ինչու հանդէսին
չգնացի։

Արդեօք դուք մի բան հետեցրիք...

ՀՈԳՈՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ

. . . . . .

Մարդկային մարմնի տկարութեան պատճառների և նրա դարմանի գիտը բժշկական գիտութեան է պատկանում։ Ճիշտ է, այս մարզում էլ բաղձանքները դեռ լիուլի չեն իրագործուել, բայց երկար փուլեր են անցել։

Գիտութեան ուժեղ լուսարձակը ամէն օր մարդկային ցեղի դէմ գոյութիւն ունեցող մի շարք նոր, դաղտնի ու վտանգաւոր թշնամիներ է յայտնաբերում։ Բարեբախտաբար նրանց մեծ մասի դէմ պաշտպանութեան միջոցներն էլ է ցուցադրում։ Դեղօրայքի ազդեցութիւնն անկասկած է։ Սէնամոլինն ու ացիոնը շատ բան են։ Վիրաբուժական գործը հրաշքի նմանութիւնն է ստանում։ Բժշկական գիտութիւնը, կամ թէ նոյնն է ասել մարդկային գոյութեան նիւթական մասի ճանաչողութիւնը զարգանում է ամէն օր։ Եւ եթէ ընթացքն օրէնքը յաւիտենական կեանք թոյլատրի, երկար չի անցնի, որ մահն ու անէութիւնը կանհետանան։

Ափսոս, սակայն, որ փիլիսոփայութիւնն այդ կողմից իր պարտականութիւնը չի լրացրել։ Բարոյականութեան ու կենցաղավարութեան անթիւ իմաստասէրներ, խորհրդատուներ որ առաջնորդներ են եղել և պատուէրներ տուել։ Անօգուտ։ Մարդկային բնաւորութեան մէջ մազաչափ անգամ փոփոխութիւն չի եղել և կեանքի անհարթ ուղին մի կանգուն իսկ չի յարդարուել։

Այսօրուայ մարդը ունկնդրելով Սոկրատի խրատներն ու Կոնֆուցիոսի և նրանցից յետոյ եկած բազմաթիւ փիլիսոփաների ուսմունքը, այնուամենայնիւ աւելի չար ու աւելի դժբախտ է, քան թէ այդ երկու գիտուններին ժամանակակից շրջանի մարդկութիւնը։ Այսօրուայ մարդու պահանջներն ու ընչասիրութիւնն աւելի մեծ է, սիրտը՝ աւելի խեղճացեալ, հոգին աւելի հիւանդ։

Մեր կեանքը նմանում է անպատսպար, կողոպուտի ենթակայ բաց մի դաշտի, որ միաժամանակ ներկայանում է յաղթութեան մի վայր՝ անդորրութեան և երջանկութեան գողերի համար։ Ամենաթեթև հոգեմ իսկ յուզմունքի և ալեկոծութեան է մատնում մեր սրտի անսահման ծովը։ Անթիւ թշնամի քմահաճոյքներ, ամէն մէկն իր ցանկացածի պէս մեր հոգին է թափանցում, հրամաններ տալիս և մեզ հոգեվարքի մէջ յետ պահում։

Տգէտն իսկ գիտէ, որ գլխացաւը դարմանելու համար բժշկին պիտի դիմել. իսկ ի՞նչ անի այն թշուառը, որ նախանձի ցաւով է տապակւում։

— Պէտք է տառապի և տոկայ։

Բչերը կը գիտակցեն, որ նախանձի հիւանդութիւնից ազատուելու համար պէտք է փիլիսոփայի հրահանգի համաձայն ընթանալ։

Եթէ գիտակցեն և ցանկանան իսկ հետևել իմաստունի ասածին, կարո՞ղ են արդեօք իրագործել այն։

Եթէ այդքանն իմանան և կարողանան, այլևս հիւանդ չի լինի։

Արդեօք փիլիսոփան կարող է մարդկային արա-

բածի բնաւորութիւնն ամբողջովին փոփոխութեան ենթարկել։

Իմաստասէրների խրատներից օգուտելու համար ամբողջ մի կեանք պէտք է նուիրել նրանց կրկնելու և յիշելու գործին։ Ապա յաճախ պիտի սխալուել նրանց գործադրութեան ժամանակ, մինչև որ, գուցէ մի օր, քիչ ու շատ չափով դիմադրել կարողանաս անդորրութեան և երջանկութեան թշնամիներին։

Իսկ այս ընթացքը մտացիներին միայն կը պատշաճի։ Ամենքը համբերութիւն չեն ունենայ խաղաղութեան ճամբան գտնելուց յետոյ այդ ուղիի վրայ տոկունութիւն հանդէս բերելու։

Երջանկութիւնն ընտրուածների սեփականութիւնն է և ոչ նրանց, որ արտաքուստ զարդարուած ու փայլուն՝ ներքուստ խեղճ ու մտահոգ են։

Ի զուր չէ որ փիլիսոփայութիւնը ձեռքից տուել է երջանկութեան բանալին։ Գիտնականները զրկելով նրան այդ ծառայութիւնից, այս նպատակի իրագործումն էլ բնական գիտութեան են յանձնել։ Հեռու չէ այն օրը, երբ արեան շրջանառութեան պէս պարզ և մեկին պիտի դառնայ հոգու և մարմնի կարողութիւնների ուղղակի յարաբերութիւնների ազդեցութիւնը։

Պէտք է սպասել, որ գիտութեան կարող ձեռքը այս գաղտնիքը ևս դուրս կը բերի յատուկ բնութեան ճզմուած ճանկերից։

Շուտով հոգու հիւանդութիւնների մի մասը — վիշտ, թախիծ, մտահոգութիւն, յուսահատութիւն, երկիւղ և այլն պիտի դարմանեն զեղերի և մարմնական բժշկութեան միջոցներով։

Պէտք է յուսալ, որ հոգու այլ հիւանդութիւններն

էլ, օրինակ՝ ագահութիւն, նախանձ, գողութիւն, կեղծաւորութիւն, խոստման դրժում, անգթութիւն, ինքնահաւանութիւն և այլն՝ կը բժշկուեն նոյն միջոցով։

Կը գայ այն օրը, երբ, օրինակ, նախանձի հիւանդութեան ենթարկուած մէկը կը դիմի բժշկին (ոչ իմաստասէրին) և կասի։

— Պ. բժիշկ, մի քանի օր է նախանձոտ եմ դարձել, շատ եմ տանջուում։

Բժիշկը հիւանդից կը հարցնի հիւանդութեան երևան գալու պատճառն ու ժամանակը։

— Մի ընկեր ունեմ, կը պատասխանի հիւանդը, որի հետ մեծացել եմ։ Սրտակիցներ ենք եղել՝ ինչպէս մի հոգին երկու մարմնի մէջ։ Կեանքի բեռը միշտ միասին էինք տանում։ Դժբախտութիւնների ժամանակ իրար աջակից՝ ոչ մի բան իրարից չէինք խնայում։ Ծաղկից միասին էինք հոտոտում և բաժակից միասին ըմպում։

Ի՞նչ ուրախ կեանք ունէինք, ինչ երջանիկ ժամեր ու ժամանակ էինք անցկացնում...

Այո, պ. բժիշկ, մարդ եթէ իսկական մի բարեկամ ունենայ՝ աշխարհից ոչ վախ և ոչ էլ երկիւղ պիտի կրի։

Բայց ցաւալի մի դժբախտութիւն պատահեց։ Վերջերս, ընկերս բարձր մի պաշտօն ստացաւ և այս դէպքը իմ մէջ նախանձ առաջացրեց։ Այս զգացմունքն ինձ վիշտ է պատճառում, բայց ինձ աւելի տանջում է այն հանգամանքը, որ ընկերոջս այլևս առաջուայ պէս չեմ սիրում։ Զափազանց դժբախտ եմ...

Բժիշկը, առանց աչքերը գոցելու, որևէ բանատեղծութիւն արտասանելու կամ իմաստասէրի կարճ

խօսքերով խրատներ կարդալու, հիւանդի կուրծքն ու մարմնի այլ մասերն է քննում, երակները շփում և մի փոքրիկ դեղատոմս գրում։

Առողջացած հիւանդը, յաջորդ շաբաթ, բաց ճակատով և ուրախութիւնից ժպտացող դէմքով ընկերոջ հետ է տեսակցում, իրողութիւնը պատմում, ապա գրկում է նրան և ներողութիւն խնդրում։

Նախանձի առարկայ դարձած ընկերը առողջացնող բժշկի հասցէն է վերցնում և մտածմունքի մէջ ընկնում։

Մի քանի օրից յետոյ բարձր դիրքի տէր ընկերը իր բարեկամի մօտ է գնում, գիրկն է առնում նրան, ձեռքերն համբուրում։

— Ա՛հ, ինչ լաւ արիր,—ասում է նա,—որ այս բժշկին ինձ ծանօթացրիր։ Ուղղակի աղատեց ինձ։

Չգիտես ինչքան դժբախտ էի դարձել, ինչ սոսկալի հիւանդութիւն էր տիրել հոգուս։ Այս պաշտօնն ստանձնելու ժամից սկսած դրութիւնս հետզհետէ փոփոխութեան էր ենթարկւում։ Քեզ ինձնից շատ փոքր էի տեսնում, ինձ թւում էր թէ քեզնից մի թիզ երկարել եմ, ինձ բարձր, իսկ մնացածներին ցած աստիճանի վրայ էի երևակայում։ Հաւատացած էի, որ օժտուած եմ կատարեալ ընդունակութեամբ ու խելքով, որից ուրիշներին զուրկ էի համարում։ Կարծում էի թէ ամէն բան գիտեմ և ամէն բան ըմբռնում եմ, թէ ինձ համար այլևս ոչ մի դժուարութիւն չկայ։

Մանգալուս ձեն ու նոյնիսկ շեշտը նոյնպէս փոխուել էին։ Բարձր ձայնով կեղծ ծիծաղում էի կամ արհեստականօրէն խոժոռ դէմք էի ընդունում և լուռ մնում։

Խիստ անհամբեր ու բարկացկոտ էի դարձել։ Երեսս մարդկանցից շատ շուտ էի դարձնում, ոչ ոքի ուշադրութեան արժանի չէի համարում։ Իսկ եթէ որևէ մէկին նայում էի, հայեացքս այնքան երկար էի պահում, որ յաճախ խեղճ մարդը աչքերը վեր ու վար էր վազեցնում։ Դիմացինի հասակն ու կազմուածքը չափում էի գլխից մինչև ոտք։

Մի վայրկեան իսկ չէի մոռանում որ այս դիրքի տէրն եմ։ Այս միտքը միացած էր բոլոր խօսքերիս ու գործերիս հետ։

Խօսակցութեան ժամանակ երբէք տրամաբանութեան ուշք չէի դարձնում և ոչ ոքի թոյլ չէի տալիս առարկելու։ Եթէ որևէ մէկից կարծիք էի հարցնում, նպատակս էր լոկ իմ խելացիութիւնը և առաւելութիւնը հաստատել այն ձևով, որ նրա կարծիքին հակառակելով, իմ արտայայտութեամբ՝ իբրև մի պարզ ճշմարտութիւն ասած լինեմ, և նրան ամօթալի թողնեմ։

Յատկապէս խուսափում էի բարեկամներիս ու ծանօթներիս տեսնելուց։ Եւ եթէ ստիպողաբար որևէ տեսակցութեան պէտք էր լինում, նրանց ներկայութեանը դէմքիս մկանունքները սեղմած և անշարժ պահած, ոչխարի աչքերի նման անդգայ և անշնորհք հայեացքով էի նրանց նայում, որպէսզի չիցէ թէ մտերմական արտայայտութիւն անեն ինձ հետ։

Նրանց ներկայութիւնը տանջում էր ինձ։ Աթոռի խորքում էին նստում, ոտքը ոտքի վրայ ձգում, երբ ցանկանում՝ ծիծաղում էին և ինչ որ մտքներից անցնում էր՝ ասում էին առանց որևէ փափկանկատութեան։

Մտերմական և սիրալիր դիտողութիւններ էին անում և գործերիս պակասութիւնների մասին պարզ

կերպով արտայայտում,

Զղային էի դառնում:

Զարմանում էի, թէ ինչպէս է, որ ես այս օտար խաւին պատկանող, խեղճ, անընդունակ մարդկանց հետ յարաբերութիւն եմ ունեցել և բարեկամ եղել։

Ցանկանում էի, որ ինձ մոռանան, ինչպէս որ ես նրանց օրէցօր աւելի էի մոռանում և եթէ իրենք չյիշեցնէին, երբէք նրանց չէի մտաբերի։

Ցանկանում էի, որ նոր մարդիկ ներկայ վիճակս բնական գտնելով՝ ինձ այս դրութեան և այս դիրքում ճանաչեն։ Ինչ որ ասեմ՝ գտնեն ճիշտ և հաստատեն, ինչ կատակ որ անեմ, նոյն իսկ անհաժ, երկար ծիծաղեն։ Եւ հէնց որ ես ծիծաղս դադարեցնեմ, նրանք էլ լռեն և շրթունքները հաւաքեն։ Իմ ներկայութեամբ քաղաքավարի լինեն և ինձ իրենց հաւասար չհամարեն։

Մի առ ժամանակից յետոյ այս ցանկութեանս հասայ, իսկական բարեկամներս ինձանից հեռացան..

Այլևս հայեացքների խորքում մտերմութեան և սիրոյ պայծառութիւնը չէի տեսնում. ձայների հնչիւններում ընկերական և բարեկամական շեշտը չէի լսում։

Սարսափի մէջ ընկայ..

Բարիքի արժէքն այն ժամանակ է գնահատում, երբ ձեռքից գնում է։

Լաւ քննելուց յետոյ նկատեցի, որ նոր ծանօթների խոնարհութիւնն ու յարգալից մեծարանքը կատարելապէս համապատասխանում է օրւայ աղդեցութեանս ու կարողութեանս աստիճանին:

Այն րոպէին, երբ իմ դիրքի դէմ սառը մի քամի փչի, դեպի ինձ ունեցած նրանց յարգանքի ու շողոքորթութեան չափն էլ զերօի աստիճանին կիջնի։

Ինձ մենակ և օտար գտայ, յուզմունքն ու ահը պատեցին ինձ..

Ի՜նչ լաւ արիր, որ այն բժշկին ինձ ծանօթացրիր։ Առողջացայ, ինձ համար որոշած հակագոռոզութեան դեղահատների կէսն էլ դեռ գործ չածած։

Փառք Աստուծոյ, նորից մարդ դարձայ...

ԻՄ ՏԵՆՉԸ

Տենչանքս է ունենալ մի սիրուհի, որի դէմքի ճերմակութիւնից սիրտս լուսաւորի և կազմուածքի տեսքից միտքս սաւառնի։ Յօնքերն իրարից բաժան և բարակ, քիթը կանոնաւոր և երեսը երկարաւուն լինի։ Աչքերը՝ խոշոր և գրաւիչ։

Գիրութիւնը չեմ հաւանում. Բայց սիրում եմ, որ մարմինն առողջ, անդամները յաղթ ու զօրեղ լինեն, որպէսզի նրանց տեսքը հոգուս ոյժ ներշնչի։

Ձեռքի գեղեցկութեան մեծ հակում ունեմ։ Մատները երկար և եղունգները վարդի կոկոնի թերթիկների պէս կորնթարդ և վարդագոյն պիտի լինեն։

Կարապի սիրուն պարանոցն ու աղաւնու գրաւիչ կուրծքը փոխ առած մի գեղեցկութեամբ օժտուած եմ ցանկանում տեսնել նրան։

Հոգիս կը լցի այնչափ հրճուանքով՝ որչափ խիտ և երկար լինեն նրա մազերը։ Ի՞նչ լաւ եթէ նրանց գոյնը սև չլինի։

Փափագս կազմող այս դէմքը, սակայն, իրը մարմնից ձուլուած և պատրանքով օդից ստեղծուած պատկեր, մտքիս մէջ մի ակնթարթ է միայն մնում, անմիջապէս անյայտանում և տեղի է տալիս այլ կերպարանքի։ Յիշողութեանս մէջ վերարտադրուում են միայն գրաւած այն սիրելիների դէմքերը, որոնք ոչ մի նմանութիւն

չունեն երևակայութեամբ ստեղծած պաշտելուս հետ։

Բայց ինչ դիմագծով ու պատկերով էլ լինի սիրուհիս, կուզեմ որ նախ ինձ հաւանի։ Այս մասին համոզում ստանալուց յետոյ, ամեն ջանք գործ կը դնեմ, որ սիրի ինձ կաթոգին սիրով, սիրահարի գեղեցկութեանս վրայ և գրաւուի իմ ընթացքով։

Միշտ ինձ յարգարելով կը զբաղուեմ։ Երկու ձեռքով երիտասարդութեանը կառչած թոյլ չեմ տայ, որ հեռանայ ինձնից։ Այնպէս ցոյց կտամ, որ ծերութիւնը երբէք չի կարող էութիւնս յաղթահարել։ Ուղիղ կը նստեմ և ուղղաձիգ կը քայլեմ, չեմ յենուի ոչ պատի և ոչ էլ ձեռնափայտի։ Երբէք թուլութիւն չեմ արտայայտի, որքան էլ յոգնած ու դաղրած լինեմ։

Գիտեմ, որ կինը զբաղուում է այն տղամարդուց, որի զգացմունքները սառած և ինքն էլ ֆիզիքապէս քայքայուած է։ Այդ պատճառով աշխոյժ և արագ շարժումով գործի կանցնեմ ու կաշխատեմ, իսկ ամէն մի խաղի և ամէն ինչի վերաբերմամբ մանկական ու պատանեկական հառնդ կը յայտնաբերեմ։

Սակայն միշտ էլ կը զգուշանամ ցանկութիւնների ու իղձերի չափազանցութիւնից։

Կը թագցնեմ այն, ինչ որ իրապէս սիրելիս լինեմ, որպէսզի պաշտելուս միտքը չխռովի, երբ սիրոյ գանձարանից նրա ոտների տակ հիւլէաչափ մի ոչ դնեմ, թերևս վայելչութիւնն ու բարեսիրութիւնը գեղեցկութեան տեղ ընդունի։

Քանի որ մարդութիւնն ու աշխուժութիւնը հեռացած երիտասարդութեանը մասամբ փոխարինող է համարուում, ես էլ այնպէս կանեմ, որ երբէք անձկութեան ու թախիծի կնճիռներ երեսս չգան դէմքիս

վրայ։ Վշտի ու խոնջանքի բեռը դուրսը թողնելով, ուրախ ու զուարթ տուն կը մտնեմ։

Բաղձանքներս կը զսպեմ և սիրուհուս ուշադրութիւնը գրաւող բաներով կը զբաղուեմ, միշտ պատրաստ նրա սրտի ցանկութիւնները կատարելու։

Քաղաքավարութեան ու բարեկրթութեան ուղիից մաղաչափ անգամ չեմ շեղուի։

Խաղալիք ձեռք բերած երեխայի նման շարունակ նրանից կախուած կը մնամ, նրանով կը զբաղուեմ և կոգևորուեմ։

Գիտեմ, որ կանայք ատում են բախտ և յաջողութիւն չունեցող մարդկանց, ուստի գործերիցս խօսելու դէպքում այնպէս կը ներկայացնեմ, որ իբր թէ աշխարհն իմ կամքով է շարժուում, որ համայն մարդկութիւնը նպատակիս լծած և երջանկութեանս կապած, անկեղծօրէն սիրում է ինձ և իմ գերին դառնում։ Միաժամանակ, ակնարկով կը հասկացնեմ, որ մարդկութիւնն իմ ցասումից երկիւղ ու սարսափ է զգում։

Բազմաթիւ փաստերով կը հիմնաւորեմ այն տեսութիւնը, թէ որևէ գործ ընթացքի և հունի մէջ դնելու համար՝ ժամանակ է պէտք։ Թէ հարստութիւնն ու երջանկութիւնը խիստ մօտ են, ահա ճանապարհի վրայ գալիս, հասնում են։ Ինձ փայլ կը տամ իբր հրաբխային լեռ, ուր երկնքի վտանգները, թափուող ձիւնի պէս, դեռ գլխիս չհասած պիտի հալուեն ու ոչնչանան։ Եւ ուրեմն երկնքի պատժից պիտի ազատուեն նրանք, ովքեր իմ հովանաւորութեան ու պաշտպանութեանը դիմեն։

Այնինից էականը կայ, այն՝ որ սիրուհուս դէմքից բացի ուրիշին չեմ նայի և ուրիշի շէմքում պաշ-

տում չեմ կանգնի։ Իբր մոլեռանդ կռապաշտ, պաշտելիից բացի բոլոր այլ կուռքերի հանդէպ աչքերս կը փակեմ։ Այնպէս ցոյց կը տամ, որ նրանից բացի աչքս ոչինչ չի տեսնում և նրանից բացի ճաշակս այլ գեղեցկութիւն չի ընդունում։

Եթէ իմ սիրելին ենթակայ լինի այն անանուն վշտերին, որոնք սրտի թագուն անկիւններից բարձրանալով, անտեղի կերպով մարդու վրայ են յարձակուում, իմացականութեան և գիտութեան լուսով կը փայլեցնեմ նրա մտքի մթագնած երկինքը և նրա ձեռքից բռնած բնութեան հանդէպ բերելով կասեմ.

— Նայիր։

Տես, այս ամբողջ գեղեցկութիւնները բնութիւնը մեզ համար է աշխարհում բեմ հանել. մեր ուրախութեան համար է գարուն ստեղծել և մեր հրճուանքի համար է սոխակը վարդի սիրահար դարձել։

Եւ որպէսզի միատեսակ տեսարանից ու յարատև գոյավիճակից ձանձրոյթ չզգանք, նա՝ հալուը կանաչ, դեղին ու սպիտակ հագուստի է վերածում, աշխարհի գոյնն ու բոյրը մշտական փոփոխութեան ենթարկում։

Տես, աշխարհի հիւլէներն ինչպէս են մեր աչքերի առաջ պար բռնել և յարատևօրէն հագուստ ու դէմք են փոխում։ Երբեմն քարի կարծրութիւն են ստանում, երբեմն կոյսի սրտի նրբութեամբ ներկայանում։

Լսիր, լակների շունչն է այս քամին, լաւ ականջ դիր, լսիր թէ ինչ խօսքեր, սիրոյ ինչպիսի պատգամներ են փոխանակում իրար հետ։

Մեր մտքի զբօսանքի համար է, որ բնութիւնը այս մանր ու խոշոր լեռները հանդէս է բերել։

Նա իր ունեցածի ամենալաւագոյնն է մեզ նուիրել՝

այս անվախճան մտքերը, որ աշխարհի ամբողջութիւնն են բովանդակում։

Ուրախ լինենք։

Մեզ ցանկալի բովանդակ երջանկութիւնները կենտրոնացած են այդ մտքի մէջ։ Մի ակնթարթում կարող ենք աշխարհը ծայրէ ի ծայր արշաւել... Լոկ մեր փափագով կարող ենք աշխարհի թագաւորութեան գահը նստել, ղեկը ձեռք առնել, ցանկացած բոպէին կանգնել և անպատասխանատու ու արագաթռիչ վեր բարձրանալ։

Մենք ևս թեւեր ունենք. ինչու սողունների պէս զանազան ոտների տակ տրորուենք։

Աչքի վեր սաւառնենք և այն բարձրութիւնից աշխարհի հանդիսավայրը դիտենք։

Դիտենք փոքր ու ստոր մարդուն, որ տոհմութեամբ ընկած անկիրպարան աշխարհի երախը՝ մէկ առ մէկ երկաթէ ճանկերից նրա գաղտնիքներն է դուրս հանում և օրէցօր նոր հրամանների յանձնառու դարձնում։ Եւ օդի ուսին հեծած, բացավայրի հիւլէներն է իր մտքին բարձում։

Ահա մտքի և մարմնի պայքարի տեսարանը։ Որքան խաբուսիկ է այդ։ Գեղեցկադէմ մի տկնարկից յաղթ և ուժեղ մարմիններն են անձնատուր լինում պարտուած, մտքի յարձակման հանդէպ ամէն անգամ մարմնի և նիւթի ամրոցներն ու ամրարտակներն են ընկնում նուաճուած։

Այդ պայքարում յաղթանակը պատկանում է հոգուն և մտքին, որ մարդու կերպարանքով է երևան եկել աշխարհի թագաւորութեանը տէր կանգնելու։

Մանն էլ, որ ծննդի պէս մեր ոյժերի կատարելու-

թեան համար է գոյութիւն ստացել, աւելի պայծառ պիտի տեսնենք այն միւս աշխարհում։ Եւ մահից աւելի կայուն կեանք պիտի ունենանք։

Այնտեղ էլ միասին պիտի լինենք, միամիտ կաց...

Այնքան այս խօսքերից պիտի ասեմ, որ վիշտը մոռացած՝ ծիծաղկոտ դառնայ։

Խօսքերիս և ընթացքիս մէջ այնքան ուշադիր կը լինեմ, բայլերս ու գործերս ստնպիսի հաշուով կը դասաւորեմ, որ սիրուհիս ինձ խոհուն և կատարեալ մարդ տեսնելով՝ իր ոտքն ընկած մի առիւծ համարի, որ ծառայութեան շղթան է վիզն անցրել։

Աշխարհի աչքը կը հանեմ՝ կեանքի վտանգի և չարամտութեան դէպքում նպատակը կը տանեմ—թէկուզ լերան չափ ծանր—անդորրը օրերում։

Սիրալիր սրտով նրա օրը յաւիտենական գարնան կը վերածեմ։ Զինչ մտքով և պայծառ հոգով նրա կեանքը գարնան արեգակի պէս կը լուսաւորեմ, որպէսզի ինձ աշխարհի սիւնն ու առանցքը համարի և իմ անէութեամբ աշխարհի գոյութիւնն էլ անկարելի գտնի։

Երբ սիրելուս հոգին ինձ հետ շղթայեմ, երբ պաշտելուս ինձ դերի և ինձ՝ նրա բարեկամն ու ապաւէնը դարձնեմ, գլուխս նրա քղանցքին դրած՝ սրտիս գաղտնիքները պիտի խոստովանեմ։

Այն մեղադրելի նման, որ դատաւորի առաջ երկար ժամեր, ամբողջ ոյժով, կեղծ պատճառաբանութիւններով իր մեղքերը ծածկել է աշխատում, ապա ծայր աստիճան յոգնածութիւնից թուլացած, դատաւորին էլ սրտի և զգացմունքների տէր կարծելով, ճշմարտութիւնը բացայայտ է դարձնում և իր ցաւերին

ամոքում սպասում, ես էլ գլխահակ կը հեծեծամ և կասեմ։—

— Պաշտպանիր ինձ կեանքի քինախնդրութիւնից, սառը մարմինս գիրկդ առնելով սփոփիր անկարող հոգիս... Ես վախենում եմ աշխարհից։

Արիւնոտ թակարդներ լարած՝ անաւոր դեռ և նենգաւոր սատանաներ եմ տեսնում ամեն կողմ։

Այդ դեռերը նախ՝ մարդու դէմքով գրաւում են ինձ, խելացնոր դարձնում։ Սիրում եմ նրանց, մոտենում, սեղմւում, նրանց մէջ ընկղմւել բաղձում, հոգիս նրանց հոգու հետ միացնել ցանկանում։

Թեանցուկ գրկած առաջ ենք գնում։ Բայց դեռ քայլ չարած՝ սարսափից կանգնում եմ տեղումս չոքած։ Բարեկամս կերպարանափոխուած՝ սատանայի տեսք է ընդունել։ Նա ինչո՞ւ երկիւղի մէջ է։ Ի՞նչու, մի՞թէ ինձնից ահ ունի նա էլ։ Բայց հօ ես մարդ եմ։ Վա՛յ, ես էլ դեռ եմ դարձել։

Քո արիը վկայ գարշում եմ այս խաղերից, ազատիր ինձ բարեկամութեան կարիքից և համասեռերիս հետ եղած կենցաղից։

Տանջւում եմ անդադար աշխարհի քաշքշուկից։ Ահ, ես ստեղծուած չեմ աշխարհի կռուի համար։ Այս սարսափդում իմ հոգին կոչնչանայ։

Նմանում եմ այն մուրացկանին, որ աչքերը յառած մեռելի քէլէխին, մուրացկաններից թշնամանք և անարգանք է լսում։

Ոտքս են աքացում, գլուխս ու դէմքս բռունցքով հարւածում։

Փրկիր ինձ մուրացկանութիւնից։

Նիւթի կիրքը արդեօք չի նմանում ագահութեանը

մրջիւնի, որ իր սննդի հազարապատիկը ժողոված, պարէնի կոյտերի վրայ է մեռնում։

Եւ միթէ հանրածանօթ լինելու և հռչակաւոր ձեռք բերելու բաղձանքը նման չէ ջրի կաթիլին, որ ծովի մակերեւոյթի վրայ պղպջակ կազմած, կոկոզավիզ՝ մի վայրկեան իրեն միւսներից աւելի բարձր չեբեւակայած՝ արդէն ցնդում է։

Որքան անհամ և կարճատև մեծութիւն։

Աստուծոյ սիրուն, ազատիր ինձ այս ազանիչ խելագարութիւնից։

Սիրտս հանելով՝ քեզ մօտ թագցրու, մատովդ փակիր աչքերիս լոյսը, կամ պահիր շարժումից մարմնս անիւը, որպէսզի չտեսնեմ սրտիս հատորին, սիրտս չտամ նրան և մարմնս մէջ ամէն վայրկեան զարհուրեան հանգէս չտարքեմ։

Եւ կամ դու ինքդ գուշակիր դարձիր. մարքի արագութեամբ փոփոխուող հոգուս ոստոստումների առարկան եղիր։

Զգիտե՞ս միթէ, որ սիրուհիների վաղորդեան զեփիւռից և վարդերի բոյրից նուրբ հայեացքը երկաթէ նետի պէս սուր և կարծր է թափանցում հոգիների խորքը։

Զգիտե՞ս միթէ, որ նրա յանդիման թղթի թերթիկից դիմացկուն չէ որոշման ու կամքի վճռանը։

Ինձ միշտ սեղմիր քո կրծքիդ, սրտիս բաբախումը սրտիդ հետ միացրու, սիրալիր խօսքերով միտքս զբաղեցրու, եթէ ոչ՝ երևակայութեան մէջ ընկած պատկերներ կը ստեղծեմ։

Առաւօտ է. արեգակը, ոսկուց ձուլած կոնքի պէս, ուրուագծւում է հորիզոնի մի անկիւնում։ Նկարիչ ար-

քան ցանկանում է ամբողջ աշխարհը ոսկեզօծել, բայց դեռ գործի չի անցել, նախ շտապ, արծաթէ և լազուրթ փոշի է ցանում երկնքի դէմքն ի վեր։

Կանաչ թաւշապատ գետինը, բաց ու մուգ գոյնով, իր ցած ու բարձունքում, ծածկւած է խոշոր լուսաճաճանչ գոհարեղէններով, որ ասուածներն իրար ընծայ են ուղարկում։

Խումբ-խումբ ծառեր, գլուխ գլխի տուած՝ դեռ շարունակում են գիշերային գաղտնիքներն իրար հաղորդել։

Գառկած մարգագետնին, հայեացքս այս տեսարանին, ականջս կողքից անցնող գետի մրմունջին տրուած, խուլ երաժշտութիւն եմ լսում—վարդի թերթը շոյող զեփիւռի մի սիւք։ Գրաւում եմ, տարում այդ ձայնով և արմունկիս յենւում. նստում, ապա վեր եմ կենում և երգի յետևից գնում, բլուրներն ի վեր դիմում։

Գունագեղ ծաղիկներով զարդարւած անհուն կանաչութիւն է տարածւած ոտքերիս տակ։ Արծաթէ գօտու պէս բացավայրի մէջքն է գրկել սպիտակ գետը, որի զոյգ եզերքում քաղաքն է շնչում—կարծես քնած մի գեղեցկուհի, սիրակէզ, զւարթ, որ միայն բարեբաստ յոյս և հրճւանք է ներշնչում։

Նւագարանի ձայնին հետամուտ՝ անտառ եմ հասնում և ծաղկեպատ մի բեմ տեսնում, որի առաստաղն ու սիւները հակայ շոճիների ճիւղերով են ծածկւած։

Յանկարծ երկնքում ճաճանչ է փայլում և շրջապատն ամբողջ լուսաւորում։ Մի յաւերժահարս է երևան գալիս և դէպի ցած իջնում։

Յաւերժահարսերի խմբին դէպի երկիր է ուղղում։

Նրանց մարմինը սիրուններին մարմիններին պէս

լուսաւոր է և խռովայոյզ

Մէկը նրանցից, մէջտեղ կանգնած, փղոսկրէ սրբինգը շրթունքին նւագում է։ Ձայներ է հնչում այնքան մաքրաջինջ, կարծես մարգարիտների հատիկներ են անընդհատ գլորւում բիւրեղէ ամանի մէջ։

Միւս յաւերժահարսները օդի մէջ պար են բռնում նւագի ձայնին համընթաց շարժումներով և հնչիւնին համաձայն վեր վար, արագ ու մեղմ ընթացքով։

Խմբերը երգում են հերթով և սիրահար կանչում։

Մէկն ասում է՝

Բոյրն աշխարհի,
Հմայն եթերի,
Ի մի հաւաքեմ,
Սիրելուս զոհեմ։

Միւսը՝

Սիրելուս համար
Նէրն է յարմար՝
Գոյներն անհամար,
Երանգներն անմար։

Երրորդը՝

Վառ արշալոյսում
Գալատ կը շինեմ,
Եւ անշէջ սիրով
Նրան նւիրեմ։

Մի ուրիշը՝

Սիրելուս տանեմ
Զեփիւռի վրայ,
Աշխարհներ տեսնի,
Երկիրներ ման գայ։

Մի այլը՝

Սիրուս անշէջ սիրով լի՝

Նրան ընծայ թող լինի։

Կամքիցս անկախ ցանկանում եմ դէպի վեր-

ջինը թռչել, ոտքերն ընկնել։

Ցանկարծ զգում եմ ագեղութիւնս, յիշում եմ, որ

մարդու կերպարանք ունեմ և դեռ քայլ չարած վերա-

դառնում ու խոյս եմ տալիս։

Շարժումիս ձայնը գրաւում է նրանց ուշադրու-

թիւնը. հետապնդում են ինձ, շրջապատում, իրենց մէջ

առնում, երգել սկսում, գէմքս ու ձեռքերս համբու-

րում։ Ցգեղութեանս ամօթից թուլանում եմ։

Երբ ուշքի եմ գալիս, տեսնում եմ ինձ մերկ, ա-

րեգակի պէս շողշողուն, յաւերժահարսերի հանդէսն եմ

լուսաւորում։ Սրտազեղ այն սիրականի հետ գիրկ ընդ

գիրկ հեռու ենք գնում, իսկ միւսները կարօտ աչքերով

մեզ են նայում...

Ի՞նչ խելառ մտքեր։

Հեռացրու ինձ քմայքների անդեկ նաւից, որ

դէպի ջրապտոյտ է գնում։

Ցանկանում էի խելքի և մտքի ոյժով աշխարհի

մութ վարագոյրը պատռել, տիեզերքը՝ իբր օրէնքի և

արդարութեան դրախտ քեզ ցոյց տալ և մարդկային

իշխանութեան գահը, այսինքն մեր թագաւորութիւնը,

այնտեղ հաստատել։

Որքան սին խօսքեր։

Վշտի ու տրտմութեան այդ քողը ես ինչպէս

կարող եմ հեռացնել աշխարհի առեղծուածից, ինչպէս

կարող եմ առաջս բացուող ուղիի վրայ դուրելիք քայլս

լուսաւոր տեսնել։ Ի՞նչ գիտեմ թէ այս վարագոյրի յետև

հոր կայ թէ լայն ծով։ Այնքանը գիտեմ, որ վերջը

պէտք է գահավէժ ընկնել։

Ջեփիւռի սիւքը էակների խառն ձայնն է ականջիս հասցնում։

Ողբի, կոծի, հառաչանքի և հեծեծանքի խուլ ձայն է միայն, այլ հնչիւն չկայ։

Թշուառներ։

Կեանքի ու մահուան երկու հրամանատարների կարգադրութեամբ իրար վրայ ընկած՝ ուժեղը թոյլին է ուտում և թոյլն ուժեղին պատառում։

Աստուծոյ սիրոյն, սեղմիր ականջս գրկումդ, որ չլսեմ այս ձայները։

Ես վախկոտ և վարանած, աշխարհից ու մարդկանցից երկիւղ եմ կրում և խոյս տալիս։ Միտքս թոյլ ու ծեր՝ ցանկութիւնս հոգեսպառ է։ Խելքիս շրջագիծը քթիցս հեռու չի անցնում։

Ես չունենալ ու տառապեալ ոռեղ կարող եմ քո յենարանն ու ապաւէնը լինել։

Այս խոստովանութիւնը լսելուց յետոյ, սիրելիս արհամարհական մի հայեացք կը նետի վրաս։ Կողքիցս կանցնի և ինձ վշտի ու տառապանքի մէջ կը թողնի...

Ո՛չ, այսպէս չէ, իմ սիրելիս բարեգութ է։ Նա իր ջերմ թևերում ինձ ապաստան կը տայ։

ՆՈՎՐՈՒԶԻ ԶԲՕՍԱՆՔ

Ասած է՝ նա է խելացին, որ երբէք չի տխրում և աշխարհի հիւլէներին խառնուած անարատադրութեան թոյնը իմաստութեան դեղթափով մշտապէս անվնաս է դարձնում։

Սակայն ես և ընկերս հակառակ ենք այս առածին և նրան փիլիսոփայական արժէք չենք տալիս, որովհետև ամէն օր, մեր խելացիութեան վերաբերմամբ, նոր հաւաստիացումներ ստանալով և մեզ՝ անցած օրուանից աւելի ուշիմ գտնելով հանդերձ, տեսնում ենք, որ մեր վիշտն ու մտահոգութիւնը անընդհատ աւելանում են, սրտներս աւելի է սեղմւում և հոգիներս աւելի թառամում։

Եւ ընդհակառակը, մտածում ենք, որ ցաւն ու անձկութիւնը մտացիութեան ապացոյց և մտքի դարգացման պատճառ են։

Այդ մասին յաճախ ենք խօսել, վիճել և այն ենթադրութեան յանգել, որ գժբախտութիւնը՝ իմացականութեան իրական սկզբնապատճառն է։

Ա՜հ, երանի թէ աշխարհի բանտի տանջալից տեսարանների և սրտախորով ողբերի հանդէպ փակ լինէին իմ հասկացողութեան և խելամտութեան աչքերը։

Երանի, ես էլ ուրիշների պէս, առողջ մտքի, նուրբ զգացմունքների և քնքոյշ սրտի տէր չլինէի։ Ոչխարի

պէս կարածէի և կանցնէի կերթայի...

Դուք էլ, որ մեզ նման կատարեալ խելքի և դատողութեան տէր էք, որ ձեր տանջանքի ու տառապանքի պատճառը սուր միտքն ու լայն հասկացողութիւնն էք համարում, անշուշտ, իբրև խելացի մէկը՝ մեզ հետ համամիտ էք։

Հիմա, որ ամբողջովին վշտակից և համաձայն ենք, եկէք մի անգամ գոնէ համարձակութիւն ստանանք խելքի օձիքը բռնելու և ասելու,—Եթէ մեր շահը քեզնից այս հոգսն ու վիշտն է լինելու, ուրեմն շատ անշնորհք վարպետ և անարժան ուսուցմնական եարդ, աւելի լաւ է չլինես։

Եթէ մեզ համար խելացիութեամբ բաց արած ամէն պատուհան մի դուռ է, որտեղից դէպի մեր ներաշխարհը որտութիւնն ու տառապանքը պիտի ներխուժեն՝ աւելի լաւ է խելքի առաջ փակենք այդ դուռը։

Յիրաւի, եթէ ուշիմութեան և գիտակցութեան արդիւնքը տանջանքն է լինելու, էլ ինչո՞ւ զարգացնել խելքն ու իմացութիւնը։ Ո՞րտեղից յայտնի է, որ յիմարները մեզնից աւելի երջանիկ չեն։

Այն ժամանակ է իմաստութիւնը ազնուական, երբ կեանքի շէմքում արիաբար կանգնած՝ զրկանքի առաջն է առնում և այդպիսի քարասիրտ թշնամիներից տունը պաշտպանում։

Իսկ եթէ անտեսանելիից մի ձայն հասնի թէ, «Էյ մոլորուածներ, ինձ դեռ չէք տեսել և չէք ճանաչել, այն՝ ինչ որ խելք էք անուանում այդ ես եմ,» ի՞նչ պատասխան կը տաք։

Այս ամբողջ միջանկեալը հետևանք էր այն մտքերի, որոնց առիթը զրելիք պատմութիւնս տուեց։

Իսկ պատմութիւնը՝ Շէյրան գնալու մեր պրօսանքի մասին է. մի ցանկութիւն, որ յիրաւի մեր խելքից դուրս բան էր։

Մտադիր էինք մի քանի օրով քաղաքից՝ խելքի ու գործի մթնոլորտից՝ հեռու լինել, մի վայրենի օդ շնչել, որ զերծ լինէր մտքից ու խմաստից։

Ես և ընկերս օժտուած մի շարք ընդունակութիւններով և կարողութիւններով, կեանքի գգւանքի և տգեղ սովորութիւնների հարկադրանքի տակ ենք գրտնում։ Եւ քանի որ անարդ այս սիրուհու սովորութիւնները ամենքի կողմից սրտանց հաւանելի են, ուստի մեզ յետ է վանում այն յանցանքով, որ մաքուր սիրտ, ամօթ ու պատկառանք ունենք։

Եւ բնական է, որ այսպէս լքուած սիրահարների խնջոյքի խօսակցութեան առարկան միայն դժգոհութիւնն ու ափսոսանքը պիտի լինի։

Այնքան զգայուն և բծախնդիր ենք, որ ճակատագրի չարակամութիւնն ու ատելութիւնը զեփիւռի սօսափիւնի մէջ էլ ենք տեսնում։

Երկնքի հեգնութիւնը՝ նրա նուրբ փուածքի ատղերի կատակերգան աչք անելուց ենք ըմբռնում և մեր բախտը յաւիտենականութեան խաւարում գտնում։

Զկայ խարդախութիւն, որ խաբեբայ աշխարհը մեր հեռատես հայեացքից ծածկել կարողանայ և չկայ առատպել, որի ստութիւնը մեր հեռախոյզ իմացականութիւնից քողարկել յաջողի։

Ցիեզերական կազմածի պակասները ժանրախոյզ մեր խելքով համեմատութեան ենք դնում և մեքենայի սխալները մեր սրամտութեամբ հաշուի առնում։

Զարմանում ենք թէ ինչու աշխարհը մեր մտքի

մի նշանով չի շարժուում և ինչու երկրագնդի շրջապտոյտը մեր լուսափայլ խելքի հրահանգով չի առաջնորդուում, որպէսզի մեր սիրտը միշտ ուրախ լինի և աշխարհի կենտրոնն ու առանցքը—այսինքն մեր աղնուական գոյութիւնը—միտապէս անդորրութեան և յաւիտենական երջանկութեան մէջ լինի։

Վատութիւններին լաւ ենք հետևում և անգթօրէն միմեանց ցուցադրում, որպէսզի չլցէ թէ որևէ կէտ մոռացուի և ցաւի այրող կայծը դիմացինի սիրտը չբթափանցի։

Մեր ճաշակի և գիտութեան մտեանը սպիտակ էջ չունի։ Գոյութեան ամենափոքրիկ մասնիկն իսկ օրէնքի ու կարգի տակ ենք դրել և հանրային ամենաթեթև ընթացքը կանոնի և ծէսի ենթարկել։

Ի՞նչ լաւ պիտի լինի այն օրը, երբ մեր իմաստութեան և ուշիմութեան լոյսը բռնած կը լինի ամբողջ աշխարհը։

Մի խօսքով հասկացողութեան ուղին չափել անցել ենք մինչև վերջին աստիճանը, սակայն չենք մտածել գժբախտութիւնից ազատելու և մեր ուրախութեան համար դարման գտնելու մասին։

Եթէ չենք կարող ժամանակի ընթացքը մեր խընդրանքով համաչափ դարձնել, ջանք էլ չենք գործադրում, որ մեր ցանկութիւնները կեանքի շարժման հետ համապատասխան դարձնենք և աւելի հանգիստ լինենք։ Ո՛չ այն ոյժն ունենք, որ դէպքերը մեր ցանկութեան ենթարկենք, և ոչ էլ այն կարողութիւնը, որ մեր իղձը պատահարին յանձնենք։

Ինչպէս. խելք խելքի տալով որոշեցինք նոր տարուայ օրերը այս տրամութեան և տառապանքի պարս-

պից դուրս գալով, յեռներն ու դաշտերը գնանք։

Քաղաքի հոգեսպառ վլվլոցից հոգին անդորրացնող դաշտի խաղաղութեանն ապաստանենք։

Երկար խորհրդակցութիւնից յետոյ Շէմրանի *) դալարագեղ աննման տեսարաններ ունեցող այգիներից մէկը ընտրեցինք։

Զբօսանքը հանգստաւէտ դարձնելու համար, իւրաքանչիւրս իր կարծած անհրաժեշտ իրերը թելադրեց խմբի գրագրին, որ մի երկար ցուցակ պատրաստեց։

Ուրախ ժամանակ անցկացնելու համար բացարձակապէս ոչինչ չմոռացանք և հաճոյքը կատարեալ դարձնելու համար ոչինչ չխնայեցինք։

Մասնակցողներիս ճաշակի և տրամադրութեան համաձայն ուտելիք և ըմպելիք ամբարելուց բացի, զգուշութեան համար (որ պակաս չգայ) ապա և ժամանակի ձեերին նմանելու հետևողութեամբ, հեռու երկրներից բերուած, մի քանի տարուայ պահածոներից էլ պատրաստեցինք,—միս, կանաչ, պանիր, կաթ և այլն։

Նախապէս հաճոյք և ուրախութիւն էինք զգում եւրոպական շիշերի մէջ եղած խմիչքների տեսքից։ Հաճոյքը՝ շշերի թւի և մեծութեան համեմատ էր։ Իսկ մենք այս կենսատու հեղուկի առատութեան համար ոչինչ չէինք խնայել։

Մեր խնջոյքին մասնակցելու էինք հրաւիրել և գոհացում տուել ամենավարպետ երաժիշտներին և քաղցրաձայն երգողներին։

---

*) Թեհրանին կից ամառանոցներն ամբողջութեամբ Շէմրան են կոչւում։

Նախապէս խնջոյքի վայրն էինք ուղարկել մի քանի բանաստեղծական գրքեր, խաղաթղթեր, բախտագուշակի առարկաներ և այլն։

Դրամը ծախսում էինք առատաձեռնութեամբ. ոչ մի խնայողութիւն։ Այդ առթիւ մտածում էինք, որ նախ ծախսերը ընկերովի լինելով, հեշտ էր նրանց ծանրութեանը դիմանալ. ապա 7 օրուայ հանգիստ և անխռով զուարճութեամբ անցկացրած կեանքի համար կարելի էր մի տարի նեղութիւն կրել։

Բարեկամներից մէկը, որ հաւաքավայր սարքաւորելու ճաշակ և սէր ունէր և որ, ծառաների հետ, մեզնից առաջ էր գնացել, տեղ հասնելով՝ խնջոյքի տեղը այնպէս էր դասաւորել, որ եւրոպական նպարավաճառի խանութի ներսում գտնուող զարդարած առագաստի էր նմանում։

Թէև դեռ ընթրիքի ժամը չէր հասել և ստամոքսը լցնելու կարիք չկար, բայց մենք ուրիշ ճար չունէինք։ Ուտելիքների ու ըմպելիքների հրաւէրն ու գայթակղեցուցիչ աչքախաղը բոլորովին թուլացնում էին մեր համբերութիւնը։ Այնպէս որ առանց սպասելու դէպի սեղաններն շտապեցինք։

Ուտելու մէջ էլ մէկզմէկու գրգռում էինք և իրար յետևից մի ամանից միւսը և մի սեղանից միւս սեղանն անցնում։

Ինչպէս անհաշիւ դրամն անփոյթ կերպով գըրպանն են նետում, այնպէս էլ մենք կերակուրն ու խմիչքն անխնայ կերպով մեր անմեղ ստամոքսն էինք լցնում։

Մի քանի անգամ խմեցինք ներկաների կենացը, ապա խմեցինք բացակայ բարեկամների առողջութեան

համար. յետոյ քիչ-քիչ հեռացանք դէպի մեծերի կենացը և մեր առողջութիւնը վնասելու գնով բաժակները պարպեցինք։

— Նստենք և նուագածութիւն լսենք,—ասացին մի քանիսը։

Երաժշտութեան մեղմ հեծեծանքները թագուն վրշտեր արթնացրին։ Ալքօլի ազդեցութեան տակ թուլացած կամքի հանդէպ սրտի կրակը բորբոքուեց և մինչ լեզուի ծայրը հասաւ։ Սկսուեց բողոքներ ճակատագրի անբարեացակամ վերաբերմունքի դէմ...

Անընդհատ խօսում և ուտում էինք. գլուխներս էլ նուագի շեշտով թափահարում։

Շատ ուշ անդրադարձանք, որ երկար ժամանակ էր, ինչ երաժշտութիւնը լսել և կերակրի ամանները դատարկել էին, իսկ մենք դեռ շարունակում էինք գանգատների տոպրակների յատակը փորփրել։ Եւ որովհետև որոշ խնդիրներում համաձայն չէինք իրար հետ, այդ պատճառով սրտի վիշտը վէճի առարկայ դարձաւ։

Լոյսը բացելուն մօտ էր՝ սեղան նստեցինք։

Խնջոյքի վայրը կարգաւորող մեր անձնուէր բարեկամը, կարծես թէ, արքայութիւն գնալու բոլոր նեղութիւնները յանձն առնելով, այնտեղից հաշասեղան էր յափշտակել և մեզ համար երկիր իջեցրել։ Բայց ինչ օգուտ։ Մենք ախորժակներս այնպէս էինք փակել և ստամոքսներս այնպիսի չարչարանքի մէջ դցել, որ ուտելիքները կարծես փայտի պէս կոշտ առարկաներ դարձած՝ մեր մէջ ուտելու ոչ մի ցանկութիւն չէին յարուցանում։

Պէտք է ասել, որ այդ դիշեր ընդհանրապէս բա-

ւականութիւն չստացանք. բացի սկզբում դէպի ուտելիքների սեղանն եղած յարձակման հաճոյքից։ Գիշերը լաւ չքնեցինք։ Շուտ էլ արթնացանք, զուցէ այն պատճառով որ վայրը նոր էր և ապա միմեանց շատ մօտ—հարևան էինք։

Այնքան դալարազարդ և հաճելի այգում գարնան առաւօտի տեսարանը մեզ վրայ այնպիսի տպաւորութիւն գործեց, ինչպիսի ազդեցութիւն կը թողնէր մի ծերունու վրայ սիրուն մի աղջկայ դէմքին խառն ի խուռն թափուած մազերի տեսքը։

Գարնան գովքը շատ են արել, բայց կիսատ են արել.—Բնութեան գեղեցկութեան նկարագրութիւնը դուրս է արտայայտելու սահմաններից։ Ես էլ իզուր նեղութիւն յանձն չեմ առնում և անկարող լեզուս Աստուծոյ մեծագործութիւնը ներբողելու չեմ գործածում։

Անցնում եմ պատմութեանս և իմ ու ընկերներիս վրայ այդ առաւօտեան արած տպաւորութիւնը մի կողմ թողնում։

Զեփիւռի շունչը նմանում էր այն սիրելի ձեռքին, որ մարմինն է փայփայում։ Նա հոգեպարար մի հաբոյր էր, որպիսին զգում ենք սիրուհու շրթունքների հպումից մեր դէմքի և գլխի վրայ։

Թռչունների գեղգեղանքը մարդու ականջին կարծես հանդիպումների խոստում և սիրոյ խօսքեր էին ասում։ Արշալոյսի փայլը անկեղծ սիրելու ժպտի պէս անձնազոհութեան ցանկութիւն էր արթնացնում։

Մի բոպէ հոգեմայլութեան մէջ բորբոքած ուղեղը երևակայութեամբ պատկերացրեց մեր սիրելուն, որ երևան էր գալիս վարագոյրի յետևից։ Երկար ժամանակից ի վեր մոռացած անսահման տենչանքն էինք

զգում. այն կենդանի, նիւթական սիրելու, որ աչք, բերան ու մազեր ունի, ահա այժմ մեր առաջ պէտք է շողշողայ և մեր գիրկն ընկնի...

Մի ժամ արշալոյսի, զեփիւռի, ծառերի, ծաղիկների, թռչունների նւագի, առաւօտեան յառաջապահների և սիրելու մասին խօսեցինք։

Եւ գեղեցկուհի սիրելուն սպասելու հաճոյքով ու բաղձանքով ապրեցինք։

Ափսոս։ Այդու զեփիւռի հետ անցաւ սիրելու մազերի անուշահոտութիւնը և արեգակի կատաղի աչքի առաջ վերացաւ հոգեպարար վիճակը։

Մեր սպասումն ունայն էր։

Սիրելին երևան չեկաւ և այս ամբողջ սրտագրաւ երևակայութիւնից լոկ տենչանք և այրող կարօտ մնաց։

Այդու տեսարանը փոխուեց։ Ծառերը, կարծես, նոր հագուստ էին հագել և գոհարազարդ գարգերից վերև կանգնած հպարտութեամբ էին նայում մեր անճարութեան և մենակութեան վրայ։

Թռչունները, ուրախ երեխաների պէս, մեր մենութեան վրայ յանիրաւի ծիծաղում ու աղմկում էին։

Զեփիւռը, հաժարձակ նշանածի պէս, ամէն րոպէ ջրի երեսից համբոյրներ էր խլում ու փախչում և իր երջանկութիւնը մեր աչքի առաջ պարզում։

Հոգեկան այս վիճակն ու թագուն վիշտը կարծում էի թէ միայն ես եմ զգում. բայց շուտով պարզուեց, որ բոլոր ընկերներս նոյն տանջանքն են ապրում։

Նրանցից մէկը, ձեռքի ափերով դէմքը շփելով, հառաչանք արձակեց և ասաց։

— Ցիրաւի որ փարնան եղանակը թուլացնող է։

— Ի՞նչ կասէք, ես էլ ծանրացել եմ—յարեց միւսը։

— Այս եղանակը մաժուլի պէս ճնշում է սիրտս,— հեծեծում էր երրորդը,—ցանկանում եմ ամէն մի ծաղիկ, ամէն մի տերև դէմքովս շոշափեմ, դալարի մէջ թաւալգլորը լինեմ և ամէն մի կանաչի համբոյր տամ։

— Սիրտս ուզում է, իբրև քամի ամպի վրայ նստած՝ երկինքներում մանդալ, գուցէ ոգևորութիւնս անցնի։

— Չգիտեմ ինչու համար այսպէս խելայնող, և թուլացած վիճակում եմ։

Ընկերներիցս մէկի ցած և կրկնուող ձայնը, որ շէնքի արևելեան կողմից էր գալիս, կտրեց խօսքի կապը։

Բոլորս վեր կացանք և նրա ձեռքի ու դէմքի նշաններով տուած հրահանգի համաձայն լռութեամբ նրա կեցած վայրը հասանք։

Այնտեղից նկատեցինք այգու ծայրում, առուի կողքին, մի հին ծառի տակ մի զոյգ գեղջուկ՝ տղայ և աղջիկ իրար հանդէպ կանգնած խօսակցում են։

Երբեմն տղան առաջ գալով ձեռքը դէպի աղջիկն էր մեկնում, իսկ սա ծիծաղելով յետ էր քաշւում։ Մի քանի անգամ այսպէս կրկնելուց յետոյ, տղան առաջ վազելով. ձուկը ճանկ գցելու պէս աղջկան գրկեց ու տաք համբոյրներով ծածկեց նրա դէմքն ու գլուխը։

Այդ համբոյրները կարծես անզգայութեան դեղ էին պարունակում, որ աղջիկը անմիջապէս իրեն երիտասարդի գիրկը նետեց և անձնատուր եղաւ։ Այդ ժամանակ տղան ազատ և հանգիստ մի քանի համբոյրներ ստանալուց յետոյ, ձեռքը գրպանն էր տանում և ինչ որ մի բան էր հանում ու աղջկայ բերանը դնում և ամէն անգամին մի համբոյր առնում։

«Ջաֆար» գոչելով դէպի ամէն կողմ դարձող պարտիզպանի ձայնը բաժանեց սիրահարներին։ Նը-

բանցից Իւրաքանչիւրը մի կողմի վրայ խոյս տուեց։

Գարտիզպանին ինչ որ մի գործի ուղարկեցինք՝ իսկ տղային՝ Ջաֆարին մեզ մօտ կանչեցինք։

— Եթէ հմտարտութիւնը խոստովանես,—ասացինք նրան,—հինգ թուման նուէր կը ստանաս, հակառակ դէպքում՝ ինչ որ եղել է, ինչ որ տեսել ենք, բաբային լուր կը տանք։

— Այս Զէբէդէն իմ նշանածս է,—պատասխանեց նա,—աշնան սկզբում ասել էր, որ «Նովրուզին քեզ մի համբոյր կը տամ», ես էլ այսօր նրան այստեղ բռնեցի։

— Իսկ այն ինչ էր, որ բերանն էիր դնում,— հետաքրքրուեցինք մենք։

— Ձեր քաղցրեղէնից էր,—քիչ տատանուելուց յետոյ պատասխանեց նա։

— Բարեկամներ,—գոչեց ընկերներից մէկը,— Աստուած վկայ որ ամբողջ այս ուտելիքներից իր իսկական տեղում գործածուող մասը միայն այն կտորն է, որ Ջաֆարը դրել է Զէբէդէյի բերանը։ Անուշը լինի։

Կարծես թէ կեանքը այդ դիպուածով պատասխանած լինէր մեր ներքին գաղտնիքներին ու բողոքներին։ Իւրաքանչիւրս առանձին և բոլորս միասին հասկացանք ու արտայայտեցինք, որ առանց սիրոյ և խորհրդի՝ գարունը ձմեռից էլ սառն է։

Սիրով բոցավառ սրտի համար միշտ էլ գարուն է, ուր կուզէ լինի՝ այգում թէ բուրաստանում։

Սիրուց և հաւատարմութիւնից դատարկ սիրտը բուերի բոյն է, թէկուզ ծաղկանոցում լինի։ Յուզմունքից զերծ մարդը շղթայած է, թէկուզ արքայութեան մէջ լինի։

Մնացած դրամն ու ուտելիքները Ջաֆարին տուինք և տխուր սրտով քաղաք վերադարձանք։

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Մի քանի օր առաջ ընկերներից մէկը ինձ մօտ եկաւ։ Ներքին տառապանքն ու մտահոգ վիճակն արտայայտում էր դէմքի վրայ։

Հայեացքը անորոշ մի կէտի յառած, յօնքերն հաւաքած, քիթը նեռի պէս սուր, այտերը խորն ընկած, ներքին շրթունքի երկու ծայրերն, ամէն բոպէ, ցած էին կախուում։

Աթոռին հանգիստ նստել չէր կարողանում, ձեռքերն ու ոտքերը կարծես թէ աւելորդ էին, չգիտէր ինչպէս պահէր, որ յարմար լինէր։

Անընդհատ շարժման և տատանման մէջ էր։

Անմիջապէս կռահեցի, որ մի բան ունի։ Ասացի.

— Շուտ, ասա բանն ինչո՞ւմն է։ Ճակատագիրն էլի ի՞նչ փորփրում է կատարել վաղեմի առատաղում։ Ի՞նչ օգին ես բերել գլխիդ։

— Եկել եմ հարցնելու—ասաց նա—թէ ինքնասպանութեան համար ձի միջոցն ես լաւագոյն համարում։

— Նախ ասա տեսնեմ,—ասացի ես քիչ մտածելուց յետոյ,—թէ ի՞նչ պատճառի հետևանք է այս միտքը, որովհետև ըստ ինքնասպանութեան գիտութեան—որի մէջ ինձ այնքան ուսեալ ես համարում—անձնասպանութեան միջոցը պէտք է համապատասխանի կեանքից զզուելու շարժառիթին և պատճառին։

Մի վայրկեան շրթունքները հաւաքեց, դէպի քիթը բարձրացրեց և կատարեալ արհամարհանքով դարձաւ ինձ.

— Չէի կարծում, որ այսպիսի վիճակը կատակի յարմար կը գտնես—ասաց անտարբեր.— ես ենթադրում էի, որ քեզ մօտ յարգանք ունեմ, մինչդեռ տեսնում եմ, որ ինձ իբրև դպրոցականի ես նայում։ Խորապէս ցաւում եմ...

Հապա մարդն իր ցաւերն ու մեծ արտայայտի. հապա ուր փնտռել այն բարեկամութիւնը, որ իր բարեկամի գոյութեանը այնպիսի արժէք տայ, ինչքան իրենին, նրա մաքերը իր մտածումների պէս ընդունի և յարգ ու կարևորութիւն տայ, հապա...

Աչքերում արտասուք էր հաւաքւել, ձայնը խեղդւում էր կոկորդում։

Անմիջապէս, սրտիս ամէն անկիւններից հնարաւորին չափ ախորժիւն և թախիծ ի մի հաւաքեցի և դէմքիս համապատասխան արտայայտութիւն տուի։

— Եթէ բարեկամ ունիս՝ այդ ես եմ, եթէ կայ մէկը, որ խելքին ու դատողութեան լրջութեանը ամենից շատ հաւատ է ընծայում, այդ էլ կրկին ես եմ։ Բայց քո հարցիդ պատասխանը հեշտ չէ։

Ես երբէք ինքնասպանութեան փորձ չեմ արել, ուստի և չգիտեմ թէ միջոցներից ո՞րն է ամենից հեշտ կերպով մեզ միւս աշխարհն ուղարկում։ Ցեռոյ, դու էլ հո գիտես, որ ինքնասպանները նորից չեն վերադառնում աշխարհ, որ իրենց տպաւորութիւններն ու ապրումները մեզ պատմեն։

Իմ կարծիքով մահը որքան արագ լինի, այնքան աւելի լաւ։ Այդ տեսակէտից էլ ինքնասպանութեան

հեշտագոյն միջոցը գուցէ գնդակը լինի։ Պայմանով միայն, որ գնդակն ուղղի սրտին կամ ուղեղին, այլապէս միտք չունի։ Ճանաչում եմ մէկին, որ ատրճանակն ականջի մէջ էր պայթեցրել։ Հետևանքը եղել էր այն, որ երկու ականջների մէջ մի ծակ բաց անելով, մնացած ամբողջ կեանքը խուլ էր անցկացրել։

Ճիշտ է, դրանից յետոյ նա ազատւել էր ափեղջփեղութիւններ լսելուց, սակայն, յամենայն դէպս, մի երկրորդ անգամ այդպիսի քայլ անելու աճապարանք երևան չէր բերել։

Ինչպէս երևում է, առաջին փորձից լաւ արդիւնք չէր ստացել։

Գործադրութեան բոպէին մեծ մասամբ ինքնասպանի ձեռքը դողում է և գնդակը ուղեղի կամ սրտի նշանից շեղւում։ Եթէ մարդ այս հաւանականութիւնից ապահով լինի, մնացածը դժւար չէ։

— Ես ատրճանակ ունեմ — աւելացրի քիչ յետոյ — եթէ ցանկանում ես կրտամ քեզ։

— Շնորհակալ կը լինեմ։

Վեր կացայ և ննջարանից ատրճանակը բերելով դրի առաջը և գործածութեան ձևն էլ ցոյց տուի (բայց յիրաւի ձեռքերս դողում էին)։

— Այս էլ հարցիդ պատասխանը—յարեցի ես— բայց եթէ դու էլ իմ բարեկամութեանը արժէք ես տալիս, պէտք է վստահես ինձ և յայտնես այս որոշմանդ շարժառիթ եղող մեծ տառապանքը։

— Նոր ոչինչ չի պատահել։ Պարզապէս աշխարհից կշտացել եմ, կեանքի միօրինակութիւնը յոգնեցրել է ինձ։ Միշտ նոյնը, միշտ կրկնութիւն է, որ տեսնում եմ։ Ի՞նչ միտք ունի այսպիսի պայմաններում

ապրելը։ Ես հօ վերջ ի վերջոյ այս աշխարհից պիտի հեռանամ, որքան շուտ՝ այնքան լաւ, այնքան հանգիստ։

Գնանք տեսնենք, այնտեղ գուցէ կեանքն առանց տառապանքի է, գուցէ ուրիշ հիմունքների վրայ է դրուած։

Լռեց և մտածմունքի մէջ ընկաւ։

— Մթթէ այս աշխարհի կեանքը նեղութիւններով է պայմանաւորուած,—հարցրի ես և անմիջապէս աւելացրի,—սխալւում ես, ասածիդ պէս չէ։ Քո ենթադրութիւնդ ու կարծիքդ իբրև բացառիկ վիճակի արդիւնք՝ անցողիկ է։ Այս դրութեան մէջ դու հաւասարակշռութիւնդ կորցրել ես և իրողութիւնները ճիշտ չես տեսնում...

Կրակ կարեց, աթոռի վրայ տեղը փոխեց մի քանի անգամ, խօսքս ընդհատեց և վրդովուած, խեղդուած ձայնով ասաց։

— Տառապանք չէ հապա ի՞նչ են այն պայմանները, որոնցով շրջապատուած եմ, տանջանք չէ հապա ի՞նչ է այն փաստը, որ որոշ մարդիկ առանց առիթի և պատճառի ատելութեամբ լցուած գէպի ինձ, արգելք են լինում յառաջադիմութեանս...

Նրանցից ոչ մէկին ես վատութիւն չեմ արել, ի՞նչու են ինձ հետ թշնամութեամբ վերաբերւում՝ չըգիտեմ։ Միտքս միշտ վրդովուած և ջղագրգիռ վիճակի մէջ պահելով, նրանք ապրելու միջոցներս են խլում։

Ամբոխի վերաբերմունքի հանդէպ, սրտիս խորքում քինախնդրութեան և վրէժի զգացմունքն է բորբոքում, որ իմ ներաշխարհն է կրծում և հոգիս թուլացնում։

Տառապանք չեն սրանք հապա ի՞նչ են։

Իսկ բարեկամներն ու ընկերները...

Հէնց որ փոքրիկ մի աջակցութեան առաջարկ ես անում՝ քմծիծաղ են տալիս, ապա շրթունքներն իրար են սեղմում և երես դարձնում։

Այս աշխարհում մարդ մենակ է, օտար։

Բայց երանի թէ մենակ լինէի։

Դէպի մեղրախորիսխը թափուող մեղուների նման խմբեր են վրաս յարձակւում, քաղցրութիւնը ծծում և փշերով խայթում։

Արդեօք տանջանք չէ այս։

Չգիտեմ թէ այս աշխարհի վայելքն ի՞նչի մէջ է կայանում. ի՞նչով կարելի է ուրախանալ և ի՞նչից օգտուել։

Կաթնատու կովի պէս, ամէն օր առաւօտից մինչև երեկոյ, գնում ենք գնում և վերջը կրկին նոյն առաջին կէտի վրայ ենք մնում։

— Թէպէտ, եթէ նիւթական միջոցներ ունենայի— շարունակեց նա—կիմանայի թէ կեանքն ինչպէս պէտք էր վայելել։ Ափսոս որ այս աշխարհի հաճոյքը դրամով է գնում, իսկ իմ ձեռքը դատարկ է...

Ի՞նչ կարելի է անել, աշխարհում մեր բաժինն էլ այս էր...

Վեր կացաւ, ես էլ հետը. համբուրեցինք, արտասուքներս իրար խառնեցինք։

Պատրաստւում էր գնալ։

— Չեմ ցանկանում և չեմ էլ կարող որոշմանդ արգելք լինել—ասացի ես—բայց քանի որ մահուան պատեհութիւնը երբէք չի անցնում և դեռ երկար ժամանակ կայ մարդկանց մահուան համար, խորհուրդ եմ տալիս որոշմանդ իրագործումը մի երկու օրով յետաձգես,

որպէսզի աշխարհից ու մարդկանցից վրէժխնդիր լինել կարողանաս։ Եթէ այս առաջարկիս համաձայն չես, այդ դէպքում խնդրում եմ իմ սիրոյս համար երկու օր կենդանի մնաս։

Մտածեց, ապա խուլ ձայնով ասաց։

— Պատրաստ եմ, քո սիրոյ համար մի քիչ էլ տանջանքս աւելացնել։

— Հիմա որ կեանքիցդ երկու օր ինձ շնորհեցիր— վրայ բերի ես անմիջապէս—պէտք է ընդունես այս ժամանակամիջոցում քեզ պարտադրածս բոլոր նեղութիւնները։

— Խօսք չունեմ, որովհետև առնուազն գիտեմ թէ դու համար և ինչ նպատակով եմ այս նեղութիւնները կրում։

— Շատ ափսոս է, որ դու դադարես գոյութիւն ունենալուց, իսկ թշնամիներդ հրճւեն գնալուդ առթիւ։

Որպէսզի, հէնց մի բոպէ իսկ նրանց սիրտը ցաւեցրած լինես, պէտք է որ նրանց բոլորի հետ էլ տեսակցութիւն ունենաս։ Դու պիտի վարես այն մարդու նման, որ իր սիրուհու հետ յարաբերութիւնները խզելուց յետոյ էրկին հաշտւում և մտերմանում է։

Գոհունակ և սիրալիր կերպարանք ընդունելով, նրանցից իւրաքանչիւրի հետ բարեացակամութիւնից ու բարեկամութիւնից խօսիր և այնպէս արա, որ քո արտայայտութիւնները հաճելի լինելով՝ ուրախութիւն պատճառեն նրանց։

Եւ որովհետև այլևս այս աշխարհում մնալու և ապրելու ցանկութիւն չունես, այդ պատճառով խօսքերիդ արդիւնքին և սպասելիք աջակցութեան ակնկալութիւն չպիտի ունենաս։ Ուստի, դիպուածով, եթէ

մէկն ու մէկը այդպիսի ցանկութիւն արտայայտի, դու խորին շնորհակալութեամբ նրա բարեհաճութիւնը մերժելով՝ վեր կը կենաս և կը հեռանաս, քանի որ դու այլևս ոչ ոքի աջակցութեան և օգնութեան կարիքը չունիս։

Այս հեզ և բարեհամբոյր վերաբերմունքիդ նպատակն այն է, որ գնալուցդ յետոյ նրանց սրտերը խոցի, այրի։

Դրանից յետոյ բարեկամներիդ ու ընկերներիդ այցելիր։ Համբուրիր, ուրախ դէմք ընդունիր, ասա, խօսիր, ծիծաղիր։ Դու հօ այլևս ոչ ոքի պէտքը չունիս և ամենքի հետ էլ եւ համարժէք եւ հաւասար ես։

Հարցրու, եթէ որևէ ծառայութեան կարիքն ունեն, ընդունիր։ Կրած այն ամբողջ նեղութիւններից յետոյ, քեզ համար դժուար չի լինի այդ փոքրիկ ծառայութիւնն էլ մատուցել։ Դրա փոխարէն քո վերանալուց յետոյ խորապէս պիտի ցաւեն քեզ համար։ Իմ նպատակս էլ հէնց այս է։

Կատարելիք մի ուրիշ պարտականութիւն էլ ունես։ Մի քիչ դժուար է գուցէ, բայց պէտք է իրագործես, քանի որ քո կեանքի ժամերից մի որոշ մասը իմ տրամադրութեան տակ ես դրել։

Վաղը առաւօտեան արեգակից առաջ արթնացիր և տանդ կտուրը բարձրացիր։ Գարնան եղանակ է, չես մրսի։ Պէտք է արևի ծագումից մի ժամ առաջ տանիքում լինես։

Բոլոր մտքերդ ուղղիցդ վանելով, իմ մասին պիտի մտածես։

Արշալոյսի ծագումը դիտես և տեսնես թէ երկինքը քանի՞ գոյն է ստանում, տեսնես թէ բնութիւնն ու

լեռներն ինչ բազմազան տեսարաններ են ցուցադրում։ Դրանց հետ միասին լսես թռչունների երգը։

Իմ կարծիքով արշալույսն այն լույսերից է, որ սիրուց ծագելով՝ դէպի սիրան է ցոլում, նա պայծառութիւնն է բարեկամութեան, ծաղկազարդ տենչն է գորովի և հաւատարմութեան, պայծառութիւնն է ուրիշների դժբախտութեան վրայ թափող արտասուքի. գութն է տառապողների խնդութեան համար արտայայտող հառաչանքի, մաքրութիւնն է անճարներին սփոփող արտի, քնքշութիւնն է չգործածուած բարիքների համար զղջացող ողբի, գեղեցկութիւնն է մեր երջանկութեան և մեր սառրադրեալների ձախորդութեան համեմատութիւնից զգացած ամօթի, ազատութիւնն է ինքզինքիս մոռացած բոպէների...

Այս իմաստների վրայ դու էլ խորացիր և տես թէ դու էլ ինձ նման զգացում ես։

Արեգակի ծագումը տեսնելուց յետոյ գնա պաշտօնիդ և սովորականին պէս զբաղուիր օրուայ գործերովդ։ Ծառայութիւնդ այնպէս կատարիր, որ քեզնից յետոյ կարօտեն ու ափսոսան քեզ։ Թող որ սրտերը շատ ցաւի քեզ համար։

Առաւօտեան ոչինչ մի կեր։ Կէսօրին հաց պանիր, մածուն, ընկոյզ կեր, կամ ինչ կերակուր կուզես, պայմանով որ արժէքը երկու ռիալից աւելի չլինի։

Ընտանիքի անդամների հետ խօսիր, ծիծաղիր, մեծ գորով ցոյց տուր և ոչ մի բանի դէմ մի առարկիր։ Երկու օրուայ կեանքի համար չարժէ դժգոհութիւն յայտնել։

Թող որ քո գնալուց յետոյ քեզ համար անհուն վիշտ զգան։

Պարապ ժամերիդ, ժամանակ անցկացնելու համար, մի քանի էջ Մասնաւի, Հաֆէզ կարդա։

Յաջորդ օրը ժամանակաւոր այս կեանքը շարունակիր իմ սիրոյ համար, իսկ երրորդ օրն ինչ ուզում ես արա։

— Երեխայ ես խաբում,—ասաց ընկերս ժըպտալով։

— Երեխայ ես խաբում—պատասխանեցի ես դէմքս խոժոռելով—բայց ինձ խոստացել ես, որ վաղն առաւօտից մինչև 48 ժամ իմ տրամադրութեան տակ պիտի լինես։ Ինչ որ պատիրեցի պիտի կատարես, ուրիշ ճար չունես։

Հասկացաւ որ վէճի տեղ չէ, տարճանակը վերցրեց, մնաս բարև ասաց ու գնաց։

Երրորդ օրը, սև զգեստ հագած, նրա բնակարանը գնացի։ Ընդառաջ եկաւ ուրախ և զարթ դէմքով։

— Յուղարկաւորութեան և սգի համար եմ եկել...

Ծիծաղեց։

— Մարդկանց համար մեռնելու շատ պատեհութիւններ կան—ասաց նա—ցանկանում եմ մի առ ժամանակ էլ քո հրահանգի համաձայն կեանք վարել։

Իրար գիրկ ընկանք, աչքներիցս ուրախութեան արտասուք էր հոսում...

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՍՌ-Ական СССР
Ա. ԻՄ, А. Мя-
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ֆարս նոր գրականութեան մասին էջ 1
Երկու խօսք հեղինակի կողմից » 23
Գրականագէտների շրջանում » 24
Հոգու հիւանդութիւնների բուժում » 34
Իմ տենչը » 42
Նովրուզի զբօսանք » 54
Ինքնասպանութիւն » 65

ՎՐԻՊԱԿՆԵՐ.

էջ	տող	տպված է	պիտի լինի
10	20	Ռուզգահը	Ռուզբգարը
11	12	Սաֆանի	Սաֆաւի
21	23	Թարգմանութիւնն	Թարգմանութիւն
23	21	եղուն	լեզուն
31	24	ներկանեի	ներկանների
34	23	և	եկել և պատէրներ են տեղ
37	29	զոցելու	կկոցելու
40	14	լսեն	լռեն
52	2	սիրուս	սիրաս

«Ազգային գրադարան»
NL0319467

9277